ՀԻՄՆԱԴԻՐՔ՝
ՄԻՍԱՔ ԵՒ ՍԱՐԳԻՍ ԳՕՉՈՒՆԵԱՆ
ԱՐՏՕՆԱՏԷՐ՝ ՄԵԼԻՔ ԳՕՉՈՒՆԵԱՆ
Հասցէ՝ Խրքանըպու, Անգարա Ճատտէսի, թիւ 36
SAHİBİ
Melik Koçunyan

JAMANAK
ԺԱՄԱՆԱԿ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ 12 ԱՊՐԻԼ 1937
28րդ ՏԱՐԻ
ԹԻՒ 11191
ԳԻՆ 4 ՂՐՇ.

ՎԱՐՉԱՊԵՏ ԻՆԷՕՆԻԻ ՊԵԼԿՐԱՏԻ ՄԷՋ

ՄԵԾ ԽԱՆԴԱՎԱՌՈՒԹԵԱՄԲ ԵՒ ԱՆԿԵՂԾ ՑՈՅՑԵՐՈՎ ԴԻՄԱՒՈՐՈՒԵՑԱՒ

ՊԵԼԿՐԱՏԻ ԲՈԼՈՐ ՓՈՂՈՑՆԵՐԸ ԹՐՔԱԿԱՆ ԴՐՕՇՆԵՐՈՎ ԶԱՐԴԱՐՈՒԱԾ

ՄԱՍՆԱՒՈՐ ԱՊԱՐԱՆՔ ՄԸ ՏՐԱՄԱԴՐՈՒԵՑԱՒ ՄԵՐ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ

Վարչապետ Իսմէթ Ինէօնիւ վերադարձին պիտի տեսակցի

ՊՈՒԼԿԱՐԻՈՅ ՊՕՐԻՍ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՀԵՏ

Եւ երկու երկիրները շահագրգռող խնդիրներու շուրջ

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ՊԻՏԻ ՈՒՆԵՆԱՆ

ՊԵԼԿՐԱՏ 11,— Վարչապետ Իսմէթ Ինէօնիւ և արտաքին գործոց Րիւշտիւ Արաս իրենց հետեւորդներով այս գիշեր ժամը 21.40ին ժամանեցին Պելկրատի կայարանը։ Շոգեկառքը երբ կայարան մտաւ, այնտեղ գիրք բռնող զինուորական նուագախումբ մը սկսաւ Թրքական քայլերգը հնչեցնել, մինչ մեծ հիւրերը դիմաւորող բուռն բազմութիւն մը «կեցցէ» աղաղակներով կը թնդացնէր կայարանը, ուր կանուխէն ժամանած էին Եուկօսլաւ վարչապետ Մ. Սթօյատինովիչ և տիկինը, պատերազմ. նախարարը, զինուորական ու քաղաքային բարձրաստիճան պաշտօնատարներ։

Կայարանը և Պելկրատ քաղաքին բոլոր փողոցները և շէնքերը զարդարուած էին դրօշներով և սիրուն վերտառութիւններով, որով կ'երեւէր Թուրքեւեուկօսլաւ բարեկամութեան անկեղծութիւնը։

Վարչապետ Իսմէթ Ինէօնիւի կառախումբը երբ կանգ առաւ Պելկրատի կայարանին մէջ, վակոնէն ամենէն առաջ վար իջաւ վարչապետ Իսմէթ Ինէօնիւ և դիմաւորուեցաւ Մ. Սթօյատինովիչի և անոր տիկնոջ կողմէն շատ սիրալիր և խանդավառ կերպով։ Եուկօսլաւ վարչապետը նոյն մտերմութեամբ դիմաւորեց նաեւ մեր արտաքին գործավար Րիւշտիւ Արասը։ Տիկին Սթօյատինովիչ սիրուն ծաղկեփունջ մը նուիրեց Տիկին Իսմէթ Ինէօնիւի։

Կայարանին մէջ երկու բարեկամ երկիրներու վարիչները աչքէ անցուցին հոն շարուած զինուորական ջոկատները և վարչապետ Իսմէթ Ինէօնիւ Եուկօսլաւ լեզուով և շատ

(Շար.ը 2րդ էջ)

ՊԵԼԿՐԱՏԷՆ ԵՏՔ

ՎԱՐՉԱՊԵՏ ԻՍՄԷԹ ԻՆԷՕՆԻԻ

ԵՒՐՈՊԱՅԻ ՄԷՋ ՃԱՄԲՈՐԴՈՒԹԵԱՆ ՄԸ ՊԻՏԻ ՁԵՌՆԱՐԿԷ

ՄԵՐ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՀԱՒԱՆԱԲԱՐ ԼՈՆՏՈՆԷ ՎԵՐՋ ՊԵՐԼԻՆ ԵՐԹԱՅ ԵՒ ՏԵՍԱԿՑԻ ՀԻԹԼԷՐԻ ՀԵՏ

Մեծն Բրիտանիոյ թագաւոր և Հնդկաստանի կայսր Ճօրճ Զ.ի թագադրութեան արարողութիւններուն, Աթաթիւրքի Թուրքիան ներկայացնող արտասովոր պատուիրակութիւնը Ապրիլ 26ին Իսթանպուլէն պիտի մեկնի։

Վարչապետը այս ամսու քսանին կամ քսանըմէկին Պելկրատէն պիտի դառնայ և Անգարա երթալով Հանրապետութեան Նախագահը իրազեկ պիտի ընէ Պելկրատի տեսակցութեանց արդիւնքի մասին։ Այնուհետեւ հրաժեշտ պիտի առնէ Աթաթիւրքէ և Իսթանպուլ պիտի դառնայ։

Անգլիոյ թագաւորին թագադրութեան Թուրք պատուիրակութիւնը Լոնտոն պիտի ուղեւորի «Էկէ» շոգենաւով։ Թուրք պատուիրակութեան նախագահ Իսմէթ Ինէօնիւ, ճամբորդութեան ընթաց-

(Շար.ը 2րդ էջ)

ԵԳԻՊՏՈՍԻ ՔԱՊԻԹԻՒԼԱՍԻՕՆՆԵՐԸ

ՋՆՋԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ ՄՕՆԹՐԷՕՅԻ ՄԷՋ ԿԸ ԳՈՒՄԱՐՈՒԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ

ԿԸ ԿԱՐԾՈՒԻ ԹԷ ԽՆԴԻՐԸ ՊԻՏԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԻ Ի ՆՊԱՍՏ ԵԳԻՊՏՈՍԻ

ՄՕՆԹՐԷՕ, 11.— Զուիցերիոյ Հանրապետութեան Նախագահ Մօթտի պատուակալ նախագահութեամբ վաղը պիտի բացուի Քափիթիւլասիօններու Համաժողովը և նախագահը պիտի խօսի բացման ճառը, ասկէ ետքը բացատրութիւն պիտի տայ Նահաս փաշա։

Պատուիրակութեանց մէկ մասը Մօնթրէօ ժամանած են, միւսներն ալ պիտի գան։ Կը կարծուի թէ պատուիրակներուն մեծ մասը սկզբունքով պիտի ընդունի քափիթիւլասիօնները ջնջելու մասին Եգիպտոսի կառավարութեան առաջարկը, բայց շատ մը մանրամասնութեանց մասին փափուկ խորհրդակցութիւններ պիտի ունենան։

Կը վախցուի որ «տարական» տարին շուրջ դժուարութիւններ ծագին։ Եգիպտոսի պատուիրակները կ'առաջարկեն որ «հպատակ» բառը գործածուի զանազան երկիրներու վերաբերող հայրենակիցներուն և այս բառը չգործածուի Ալժէրիացի և Թունուզցի պաշտօնեաներուն։

Առժամեայ վարչաձեւին տեւողութեան մասին խնդիր պիտի ծագի։ Ոմանք կ'առաջարկեն վեց տարի և ոմանք քսան տարի։ Խնդրոյ նիւթ պիտի ըլլան խառն դատարանները։

Կը յուսացուի թէ Համաժողովը պիտի կրնայ դժուարութեան յաղթելով համաձայնութեան մը յանգիլ։

ԳԱՀԻՐԷ, 11.— «Ալ Հիճրէթ» թերթին խմբագրապետին Մօնթրէօէն տուած տեղեկութեան համաձայն, Իտալացիները Եգիպտոսի պահանջումներուն մասին Ֆրանսացիներէն աւելի թոյլատու կը գտնուին։

ԻՏԱԼԻՈՅ

ԱՐՏ. ՆԱԽԱՐԱՐ ԿՈՄՍ ՉԻԱՆՕ

ԱՅՍՕՐ ՊԱՇՏՕՆԱՊԷՍ ԱՆԳԱՐԱ ՊԻՏԻ ՀՐԱՒԻՐՈՒԻ

ՓԱՐԻԶ, 11.— Հռոմէն տրուած տեղեկութեանց համաձայն, Հռոմի Թուրք դեսպան Ռաղըպ Պայտուր վաղը առաւօտ արտաքին գործոց նախարար Չիանօ կոմսը պաշտօնապէս Անգարա այցելելու պիտի հրաւիրէ։

Որոշուած կրնայ նկատուիլ որ Չիանօ կոմսը աշնան մէջ պիտի այցելէ Թուրք կառավարութեան ոստանը։

ՀԱԿԱՌԱԿ ԲՈԼՈՐ ՋԱՆՔԵՐՈՒՆ

ՖԱՇԻԶՄԸ ՊԱՐՏՈՒԵՑԱՒ ՊԵԼՃԻՔԱՅԻ ՄԷՋ

ՎԱՆ ԶԷԼԱՆՏ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ ՇԱՀԵՑԱՒ ՋԱԽՋԱԽԻՉ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹԵԱՄԲ

ԱՆԳԼԻՈՅ ՎԱՐՉԱՊԵՏ Մ. ՊԱԼՏՈՒԻՆ ԱԼ ՖԱՇԻԶՄԻ ԵՒ ՊՈԼՇԵՎԻԶՄԻ ԹՇՆԱՄԻ

ՓԱՐԻԶ, 11.— Այսօր տեղի կ'ունենայ Պելժիոյ վարչապետ Վան Զէլանտի և անոր հակառակորդին՝ Լէօն Տէկրէլէի միջեւ ընտրական պայքարը և բովանդակ ֆրանսական մամուլը Վան Զէլանտի համակրութիւն կը յայտնէ։ Ֆրանս. թերթերը կը յայտնեն թէ այս ընտրութեան մէջ հետաքրքրական կէտը այն է որ տրուած քուէները ցոյց պիտի տան որ ֆաշիզմը պիտի չանի թէ ոչ ռամկավարութիւնը։

Խաղաղ քուէարկութիւն

ՊՐԻՒՔՍԷԼ 11.— Այս առաւօտ ժամը 8ին սկսան ընտրութիւնները։ Քուէարկութիւնը պիտի տեւէ մինչեւ ժամը 13։ Երկու թեկնածու միայն կայ.— Վանզէլանտ և Տէկրէլէ։ Ընտրական 35հարիւր կեդրոն բացուած է։ Քուէարկութեան արդիւնքը, երեկոյեան միայն յայտնի պիտի կրնայ ըլլալ. ընդհանուր առմամբ, քուէարկութիւնը խաղաղօրէն տեղի կ'ունենայ։

Էշերու և ջորիներու կարաւան մը կազմուած էր. այս կենդանիները իրենց վրայ կը գրէին «Ես Տէկրէլի կուտամ իմ քուէս» վերտառութեամբ տախտակներ. հակառակ որ ասոնք Պրիւքսէլի փողոցները շրջան ըրին, ոչ մէկ դէպք չպատահեցաւ։

Ընտրութիւնները աւարտեցան

ՊՐԻՒՔՍԷԼ 11.— Քուէարկութիւնը ժամը 13ին աւարտեցաւ և կը տեսնուի թէ Վանզէլանտ շահած է քուէներու մեծամասնութիւնը։ Վանզէլանտ ալ ժամը 8.15ին տուաւ իր քուէն և ջերմապէս ծափահարուեցաւ։

Մ. Պալտուինի Հրաժեշտի ճառը

ԼՈՆՏՈՆ 11.— Վարչապետ Մ. Պալտուին, Պահպանողական ընտրելիներու մէկ հաւաքոյթին մէջ, իր հրաժեշտի ճառը խօսած և անոնցմէ խնդրած է որ ի գին ամէն բանի պահպանեն ռամկավար հաստատութիւնները։ Վարչապետը ապա Անգլիոյ քաղաքական վարիչներէն խնդրած է անգլիացի ժողովուրդը պաշտպանել ֆաշիզմի և քոմիւնիզմի դէմ։

Ըմբոստ օդանաւեր կը ռմբակոծեն Մատրիտը

Ըմբոստ օդանաւեր բուռն կերպով ԴԱՐՁԵԱԼ ՌՄԲԱԿՈԾԵՑԻՆ ՄԱՏՐԻՏԸ

ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻՆ ԴՈՒՌՆԵՐՈՒՆ ԱՌՋԵՒ ԱՐԻՒՆԱԼԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏՆԵՐ ՏԵՂԻ Կ'ՈՒՆԵՆԱՆ

ԻՆՉՈ՞Ւ ՉԵՆ ՊԱՐՏՈՒԻՐ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆՆԵՐԸ

(Նիւթը կարդալ 2րդ էջ)

Գերմանեւսովետ. զինակցութեան մը ՆԱԽՕՐԵԱԿԻ՞Ն ԿԸ ԳՏՆՈՒԻՆՔ

Հիթլէր այս մասին կը խորհրդակցի ԻՐ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՍՊԱՆԵՐՈՒՆ ՀԵՏ

ԼՈՆՏՈՆ 11.— Գերման եւ սովետ համաձայնութեան մը նախօրեակին մէ՞ջ ենք, եւ տրուած ըլլալով որ անկարելի բան չկայ քաղաքական աշխարհին մէջ, շատ ալ անհաւանական չէ «Սընտէյ Քրոնիքլ»ի տուած լուրը, ըստ որում, ծածուկ առաքելութեամբ, կարգ մը գերման բարձրաստիճան սպաներ Սովետ հողի վրայ տեսակցած են ռուս սպաներու հետ։

Հիթլէր, որուն գերման բանակները հաղորդեցին իրենց տեսակցութեան արդիւնքը, իր կարգին կը խորհրդակցի Զօր. Լուտէնտորֆի, Պլոմպէրկի եւ Կէօրինկի հետ։

Սովետ Միութիւններու հետ համակցողութեան լեզու մը գտնելու հնարաւորութիւնը խնդրոյ առարկայ է. տրուած ըլլալով որ Գերմանիոյ արեւելեան կողմը, հզօր Ռուսիոյ մը հետ բարեկամական յարաբերութիւնները՝ շատ աւելի հզօր երաշխաւորութեան գրաւական մը պիտի ըլլան Գերմանիոյ խաղաղութեան համար։

Ծայրագոյն Արեւելքէն, ճապոն կայսրութեան հետ միասին, Սովետները պաշարելու Հիթլէրի ծրագիրը շատ ալ դրական արդիւնք մը չի կրնար տալ. կ'երեւայ թէ Ֆիւրէր, ինք ալ համոզուած է այս ծրագրին անկարելիութեան, մանաւանդ որ «Ծագող Արեւու կայսրութիւնը» երբեք միջազգային գաղափարականին պէս չըմբռնէր նիզակցութիւնը եւ կնճռոտութիւններու առեն միայն ի հաշիւ իրեն կը կը գործէ։

Բոլոր առնք նկատի ունենալով «Սընտէյ Քրոնիքլ» կը կարծէ գիտնալ թէ Հիթլէր, դժուարին խնդիր մը լուծելու համար, այս միջոցիս Ռոքհուրգի նստած է իր զինուորական խորհրդականներուն հետ։

Յաքիր Իբի կրօնական պատերազմ ՀՌՉԱԿԵՑ ԱՆԳԼ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԴԷՄ

ԿԱՆՏԻԻ ԱՌԱՋԱՐԿՈՎ ԻՐԱՒԱՍՈՒ ԱՏԵԱՆ ՄԸ ՊԻՏԻ ԿԱԶՄՈՒԻ

ԼՈՆՏՈՆ, 11.— Նիւ Տէլհիէն կը տեղեկացնեն թէ սաստիկ կռիւներ տեղի ունեցած են Ուրբաթ օր, Հնդկաստանի հիւսիս-արեւմտեան սահմանագլխուն վրայ եւ այս կռիւներուն մէջ մեռած են անգլիացի վեց սպայ եւ վիրաւորուած են դարձեալ անգլիացի հինգ սպայ։

Յաքիր Իբի կրօնական պատերազմ հռչակած է Շաքթու ձորին մէջ։ Աւելէ կը հաւատի թէ ըմբոստութիւնը մեծ ծաւալ պիտի առնէ։

Հնդիկ քոնկրէին կուսակցութիւնը ամսոյս 26ին յետաձգած է իր նիստը որ այսօր պիտի գումարէր իր գործադիր քոմիթէին նախապէս տուած որոշումով։

Զինուած օթօմօպիլներ եւ օդանաւեր

ՆԻՒՏԷԼՀԻ, 11.— Առնուած մանրամասնութիւններէ կը տեղեկանանք որ պարենաւորումի կարաւան մը յարձակում կրեց այն պահուն՝ երբ դուրս կ'ելլէր այն կիրճէն որուն երկու կողմը գրեթէ 200 մեթր երկարութիւն ունի։ Զինուած օթօմօպիլներ եւ օդանաւեր անմիջապէս վրայ հասան եւ հակայարձակում գործելով բացին ճամբան եւ կարաւանը կրցաւ իր ճամբան շարունակել։

Առնուած վերջին տեղեկութեան համաձայն Վազիրիսթններու հետ տեղի ունեցող այս կռիւներուն մէջ, Անգլիացիները ունեցած են 23 մեռեալ եւ 45 վիրաւոր։

Իրաւունքի դատարան մը սահմանադրութեան մասին

ՎԱՐՏԻԱ, 11.— Կանտի, Րիւթէրին ըրած մէկ յայտարարութեան մէջ թելադրեց երեք դատաւորներէ կազմուած իրաւունքի դատարան մը կազմել որոշելու համար թէ կառավարիչները իրաւասութիւն ունի՞ն տալու այն ապահովութիւնները զոր կը պահանջէ համահնդիկ համաժողովի կուսակցութիւնը եւ ասիկա պայման կը դնէ գաւառներու դահլիճներուն կազմութեան համար։

Անգլ. կառավարութիւնը եւ Հնդիկ համաժողովը մէյմէկ դատաւոր ընտրեցին եւ ասոնք ալ պիտի որոշեն երրորդը։

Ըմբոստ օդանաւեր բուռն կերպով ԴԱՐՁԵԱԼ ՌՄԲԱԿՈԾԵՑԻՆ ՄԱՏՐԻՏԸ

ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻՆ ԴՌՌՆԵՐՈՒՆ ԱՌՋԵՒ ԱՐԻՒՆԱԼԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏՆԵՐ ՏԵՂԻ Կ'ՈՒՆԵՆԱՆ

ԻՆՉՈ՞Ւ ՉԵՆ ՊԱՐՏՈՒԻՐ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆՆԵՐԸ

ՄԱՏՐԻՏ, 11.— Ծանր հրետանին այս առտու ժամը 10.45ին սկսաւ ռմբակոծել Մատրիտը։ Քաղաքին բարձրադիր տեղերու տուներուն վրայ տասնըհինգի չափ ռումբեր ինկան։ Փողոցները թափուր են եւ տուներու, շէնքերու մարդիկը նկուղները ապաստանած են։

ՄԱՏՐԻՏ, 11.— Կէսօրին ռմբակոծումը վերջ գտաւ։ Ամէնէն աւելի վնասուեցաւ Կրան Վիախ շէնքը. պատուհանը փլաւ։ Շէնքին թանձր ճակատը ծակ ծակ եղած է։

Ընդհարումներ մայրաքաղաքին առջեւ

ՄԱՏՐԻՏ, 11.— Ապստամբները երէկ Մատրիտի ճակատին վրայ, մասնաւորաբար Գազա տէլ Քամփոյի կողմը հակայարձակումի սկսան։ Կռիւը շարունակուեցաւ մասնաւորաբար Նախորդ գերեզմանատան շուրջ, զինուոր. հիւանդանոցին եւ Գազա տէլ Քամփոյի վրայ իշխող Կարապիթթաւի ճակատը։

Կառավարութեան օդանաւերը ուժգնօրէն ռմբակոծեցին ապստամբներուն դիրքերը։ Ասկէց զատ, կառավարական ուժերը երէկ Բուէնթէ տէ Լօս Ֆրանսէզէսի շուրջը յառաջանալով ապստամբներուն գիծերը ճեղքելէ յետոյ, Համալսարանի թաղին եւ Գազա տէլ Քամփոյի միջեւ գտնուած ճամբան գրաւեցին։ Գրաւուած խրամներուն մէջ կը գտնուին ինքնաշարժ զէնքեր, զոր Գերմանները ու Իտալացիները տուած էին անցած Փետրուարին։

Հիւսիսային ճակատին վրայ

ՊԱՅՈՆ, 11.— Սպանիայէն եկած փախստականներուն տուած տեղեկութեան համաձայն, սպասուած արդիւնքը չտուին ապստամբներուն Պիսքայայի կողմը ըրած յարձակումները։ Կը յուսացուի թէ շուտով պիտի վերագրաւուի Պիլպաօն, բայց ապստամբները օրերէ ի վեր Տուրանկոյէն առաջ եւ Պիլպաոյէն երեսուն քիլօմէթր հեռու կը գտնուին։ Այս պատճառով զօր. Մօլա հրամայած է առժամեայ կերպով դադրեցնել գործողութիւնները։

«Հուտ» տրէտնօթը Պիլպաօ կ'երթայ

ՃԻՊՐԱԼԹԱՐ, 11. — «Հուտ» տրէտնօթը, որ 42,000 թօնօ տարողութիւն ունի, երէկ ժամը 21ին հրամանն առաւ երթալ Պիլպաօ։ Ծովային շրջանակները կը յայտնեն թէ տրէտնօթին սպանիական ջուրերը երթալը կապ ունի ոչ միջամտութեան գործին հետ։

Ֆրանս. օժանդակութիւնը Սպանիոյ կառավարութեան

«Տէյլի Մէյլ» կը գրէ.— Ֆրանսացիները կը վարեն Սպանիոյ կարմիր ուժերը։ Ֆրանսայի զօրավարի մը առաջնորդութեամբ ֆրանսական սպայակոյտէն 25 սպաներէ բաղկացած զին. մարմին մը կը գործէ։ Ֆրանսացիները բացէ ի բաց 155 միլիմէթրնոց թնդանօթներ եւ պատերազմող օդանաւեր կուտան կառավարութեան։

Սպանիական կառավարութեան եւ Ֆրանսայի տուներու միջեւ պայմանագրութիւն կնքուած է մեծաքանակ հրացան, փամփուշտ եւն. յանձնելու համար։

ՊԵՂ ԿՐԱՏԻ ԲՈԼՈՐ ՓՈՂՈՑՆԵՐԸ ԹՐՔԱԿԱՆ ԴՐՕՇՆԵՐՈՎ ԶԱՐԴԱՐՈՒԱԾ

ՄԱՍՆԱՒՈՐ ԱՊԱՐԱՆՔ ՄԸ ՏՐԱՄԱԴՐՈՒԵՑԱՒ ՄԵՐ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ

(Շար. Ա. էջէն)

յատակ կերպով մը զինուորները բարեւեց, Եուկօսլաւ աւանդական ձեւով անոնց ըսելով. «Աստուած ձեզի օգնական ըլլայ»։

Բոլոր զինուորները միաբերան պատասխանեցին. «Աստուած քեզի օգնէ»։

Պաշտօնական ներկայացումներէ վերջ, երկու բարեկամ վարչապետները հոն սպասող առաջին օթօն նստեցան եւ մեկնեցան վարչապետ Իսմէթ Ինէօնիւի բնակութեան յատկացուած մասնաւոր դղեակը։ Անոնց օթօներուն հետեւեցան միւսները ուր կարգով նստան Տիկին Իսմէթ Ինէօնիւ, Տիկին Ստոյատինովիչ եւ ուրիշ հիւրեր եւ բարձր պաշտօնատարներ։

Ճամբու ընթացքին

Վարչապետ Իսմէթ Ինէօնիւի եւ իր հետեւորդներուն կառախումբը Եուկօսլաւ հողին վրայ առաջին կայարանին Նիշի մէջ մեծ խանդավառութեամբ դիմաւորուեցաւ։ Ինչպէս միւս բոլոր կայարանները այստեղ Թուրքեւեուկօսլաւ դրօշներով զարդարուած չէ. ժողովրդային խուռն բազմութիւն մը դիմաւորելու եկած էր օրուան մեծ հիւրերը։

Նիշի կայարանին մէջ մեր վարչապետը դիմաւորեցին Պելկրատի Թրք. դեսպան Ալի Հայտար Աքթայ եւ Եուկօսլաւիոյ Անգարայի դեսպան Մ. Լազարէվիչ, տեղւոյն թաղապետութեան նախագահը որ բարի գալուստ մաղթած է մեր վարչապետին եւ անոր տիկնոջ գեղեցիկ ծաղկեփունջ մը նուիրած է գարնանային թարմ ծաղիկներէ պատրաստուած։ Նիշի կայարանին մէջ զին. նուագախումբ մը Թուրք անկախութեան քայլերգը նուագած եւ պատիւներ ընծայած է օրուան հիւրերուն։

Թաղապետութեան Նախագահին բարի գալստեան ճառին փոխադարձած է վարչապետ Իսմէթ Ինէօնիւ պատշաճ խօսքերով եւ ապա շոգեկառքը շարունակած է իր ճամբան դէպի Պելկրատ, ուր կայարանին մէջ կանուխէն հաւաքուած էին օտար երկիրներու Պելկրատի բոլոր դեսպանները եւ դիւանագիտական մարմնի անդամները։

Պուլկարիայէն անցք

ՍՕՖԻԱ, 11.— Վարչապետ Իսմէթ Ինէօնիւն եւ Թրք. մարմնի միւս անդամները փոխադրող շոգեկառքը այս առաւօտ ժամը 7ին պուլկարական հող մտաւ եւ առաջին

ՎԱՐՉԱՊԵՏ ԻՍՄԵԹ ԻՆԷՕՆԻՒ

ԵՒՐՈՊԱՅԻ ՄԷՋ ՃԱՄԲՈՐԴՈՒԹԵԱՆ ՄԸ ՊԻՏԻ ՁԵՌՆԱՐԿԷ

ՄԵՐ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՀԱՒԱՆԱԲԱՐ ԼՈՆՏՈՆԷ ՎԵՐՋ ՊԵՐԼԻՆ ԵՐԹԱՅ ԵՒ ՏԵՍԱԿՑԻ ՀԻԹԼԷՐԻ ՀԵՏ

(Շար·Ա· էջէն)

քին, Բիրէա պիտի հանդիպի։ Պատուիրակութեան յարգելի նախագահը արտօնած է որ Թուրք մամուլի ներկայացուցիչները զինքը փոխադրող «Էկէ» շոգենաւով ճամբորդեն։ Խիստ հաւանաբար, վարչապետը, Յունաստանի ցամաքային ջուրերուն մօտ, «Գոճաթէփէ» թորփիյանաւը փոխադրուի եւ Պիրէօսի մէջ տեսակցի հելլէն վարչապետին հետ։

Ոչ-Միջամտութեան Յանձնաժողովի նախագահ՝ գնդապետ Սաֆֆէթտինը Ճիպրալթար փոխադրող «Զաֆէր» թորփիյանաւն ալ մինչեւ Ճիպրալթար՝ «Գոճաթէփէ»ի հետ՝ պիտի ընկերանայ «Էկէ» շոգենաւին։

Թուրք նաւերը, Մալթայի ջուրերէն անցնելու առեն, պիտի դիմաւորուին Միջերկրականի Անգլիական Ծովապետութեան կողմէ՝ անգլիական տորփիլ մը անոնց պիտի ընկերանայ մինչեւ Ճիպրալթարի նեղուցը։

«Զաֆէր» հոսկէ բաժնուելով Ճիպրալթար պիտի երթայ, իսկ Թուրք պատուիրակութիւնը փոխադրող «Էկէ»ի, մինչեւ Լոնտոն պիտի ընկերանան Ճիպրալթարի նաւատորմին պատկանող երկու թորփիլանաւեր։

Թագադրութեան արարողութիւններուն ներկայ ըլլալէ ետք Զօր. Իսմէթ Ինէօնիւ «Էկէ» նաւով Քիլ պիտի երթայ։ Վարչապետը Ծովակալ Շիւքրիւ Օքանի հետ, գերման նաւարաններուն մէջ շինուող երկու ընդծովեաները պիտի քննէ։ «Էկէ» եւ «Գոճաթէփէ» թորփիլանաւը գերման ջուրերուն մէջ պիտի ողջունուին գերման ծովակալին կողմէ։

Յամառ զրոյց կը շրջի թէ Զօր. Իսմէթ Ինէօնիւ Պերլին պիտի այցելէ եւ պիտի տեսակցի Հիթլէրի հետ։

կայարանին Սվիլէնկրատի մէջ դադար առաւ, ուր դիմաւորուեցաւ պուլկար ապահովութեան տնօրէն Կոլուպօֆի եւ երկաթուղիներու ընդհ. տնօրէնին կողմէ։ Այս անձերը մեր վարչապետին ընկերացած են մինչեւ Եուկօսլաւ սահմանագլուխը։ Իսկ Ֆիլիպէի կայարանին մէջ վարչապետը դիմաւորած են Սոֆիայի Թրք. դեսպան Ալի Շեւքի Պէրքէր եւ տիկինը, ինչպէս նաեւ Ֆիլիպէի Թրք. հիւպատոս Իսմայիլ Հագգը եւ տիկինը։ Ֆիլիպէի կայարանին մէջ շոգեկառքը 15 վայրկեանի չափ դադար մը առած է եւ այս ընթացքին վարչապետ Իսմէթ Ինէօնիւ կարճ տեսակցութիւն մը ունեցած Թուրք պաշտօնատարներուն հետ։

Շոգեկառքը Սոֆիա ժամանեց 14ը երեք վայրկեան անցած։ Խիստ սիրալիր ընդունելութիւն մը եղաւ մեր վարչապետին։ Սոֆիայի կայարանը փութացած էին Զար Պօրիսի արարողապետը, նախարարապետ եւ արտաքին գործերու նախարար Քէօսէ Իվանօֆ եւ տիկինը, Թագաւորին խորհրդական Կրույէֆ, պուլկար մամլոյ դիւանի տնօրէնը, նախարարապետին մասնաւոր դիւանի տնօրէնը, Սոֆիայի Թուրք դեսպանատան պաշտօնէութիւնը, դիւանագիտական մարմինը ամբողջութեամբ, լրագրողներ, բարձր զինուորականներ ու պաշտօնատարներ եւ ծովածաւալ բազմութիւն մը։

Շոգեկառքը կէս ժամ կանգ առաւ Սոֆիայի կայարանը։

Պուլկար նախարարապետին եւ Զօր. Իսմէթ Ինէօնիւի միջեւ տեսակցութիւնը խիստ մտերմական եւ անկեղծ էր։ Քէօսէ Իվանօֆ Թուրք մեծ պետական մարդը պուլկար հողին վրայ տեսնելուն առթիւ սրտագին ուրախութիւն յայտնեց։ Երկու պետական մարդերը սուրճ խմեցին կայարանի, Թագաւորին յատուկ սալոնին մէջ եւ տեսակցեցան գլ... գլխի։

Տիկին Քէօսէ Իվանօֆ ալ իր փափուկ ասպնջականութեամբ ծարեց Պայան Իսմէթ Ինէօնիւի, չքեղ օրքիտէներու փունջ մը մատուցանելով [illegible]։

Թուրք պատուիրակութեան անդամները Սոֆիայի կայարանին կարծես թէ օտար հողին վրայ չէին գտնուեր, այնքան մտերմական մթնոլորտը եւ ընդունելութիւնը...

Շոգեկառքին մեկնումի պահուն պատուակարգ խանդավառութեամբ փերու փոթորիկ մը փրթաւ։ Իսկ Թուրք դեսպանը եւ Պայան Ալի Շեւքի Պէրքէր մինչեւ Զարիպրոտ ընկերացան Թուրք պատուիրակութեան։

Իսմէթ Ինէօնիւ շոգեկառքին հանգիստ չըրաւ, յոգնիլ չգիտցող երկաթէ վարչապետը, բարեհաճեցաւ իր վակօն-սալօնը ընդունիլ պուլկար մամուլի ներկայացուցիչները, զանոնք մեծարեց եւ անոնց հարցումներուն պատասխանեց։

Մասնաւորաբար բացատրութիւններ տուաւ Հաթայի դատին շուրջ, մեր վարչապետը յարմար առիթ լաւագոյնս օգտագործեց պուլկար լրագրողները լուսաբանելու համար, բացատրեց Թուրքիոյ ուղիղ ընթացքը եւ ի մասնաւորի վստահութիւն յայտնեց Ազգերու Ընկերութեան հանդէպ։

Պելկրատէ վերադարձին

Վարչապետը Ապրիլ 20ին կրկին Սոֆիա պիտի գտնուի։ Եուկօսլաւ պետութիւնը նաւոր շոգեկառք տրամադրած է վարչապետ Ինէօնիւի, որ մինչեւ Սոֆիա այդ շոգեկառքով պիտի երթայ։ Սոֆիայի մէջ հինգ ժամ հիւր պիտի ըլլայ Ն. Վ. Պօրիսի։

Այլեւս վերջ գտաւ գիւղ տեղեր ջուրի նուազութիւնը

Կրային եւ ոչ խմելի հորի եւ աղբիւրներու ջուրերը

ՎԷՊՕԼԻՏ ԶՏԻՉ գործիքներու միջոցաւ

անուշ եւ խմելի ջուրի կը վերածուին 0—1 համեմատութիւնով։ Բօրթաթիֆ գործիքները կրնան ժամական 250 լիդր ջուր զտել։ Գին՝ 25 Թրք. լիր...

ՎԷՊՕԼԻԹՕ Ա. Կ. ՍԻՒԻՍ

Վէպօլիտ Լիմիթըտ, Վօյվօտա ճառտէսի 40—42, Կալաթա

ՄԱՐԶԱԿԱՆ

ՔՈՒԼԹՈՒԼՈՒՇ Բ. ՅԱՂԹԵՑ ԲԵՐԱ Բ.Ի 2–1 ԿՈԼՈՎ

Երէկ առաւօտ ժամը 3ին մըրցեցան Բերայի և Գուրթուլուշի Բ. կազմերը ղեկավարութեամբ Առնան Սօյաքի և խաղը վերջացաւ 2—1 Քուրթուլուշի յաղթութեամբ։

Խաղը անցաւ մասամբ Բերայի տիրապետութեան տակ, սակայն Քուրթուլուշի երիտասարդ պահպանողական գիծը կարողացաւ չէզոքացնել Բերացիներու ներդաշնակ խաղարկութիւնը։

Այս առթիւ կ'արժէ քանի մը քաջալերական խօսք ընել Քուրթուլուշէն նորեկ խաղացողներուն։

Բերդապահ Ցակոբ թէպէտ լաւ խաղարկութիւն մը ցոյց տուաւ, սակայն խառնակ վիճակներու ընթացքին կը շփոթի, փորձի պակասը յայտնի է, պէքերը Ժորժ, Բանայօթ ու կեդրոնի միջնապահ Ժօզէֆ լաւ և էնէրժիք խաղ մը ցոյց տուին։

Գալով հաֆերու Օննիկ և Սուրէն հակառակ իրենց անփորձութեան կարողացան կասեցնել վտանգաւոր յարձակումները։

Իսկ յարձակողական գծին մէջ բացի Եօմէրէ և Սոլոմոնէ միւս երեքը իրենց պարտականութիւնը կատարեցին։ Սոլոմոն իր փորձի պակասով, իսկ Եօմէր ալ իր անձնական խաղով միշտ աւրեցին յարձակողական գծի ներդաշնակութիւնը։

Կոլերէն մին ըրաւ ձախ բացը, իսկ միւսն ալ Պալեան։ Կը շնորհաւորենք Քուրթուլուշէն երիտասարդ ֆութպոլէօրները։

Ա. Ե.

ԲԵՐԱ ՅԱՂԹԵՑ ՔՈՒՐԹՈՒՇԻ

Նոր Շիշլիցներու մրցումէն առաջ Բերա և Քուրթուլուշ մրցեցան Թաքսիմի լիկին համար։ Քուրթուլուշցիք կրկին բաղդ չունէին երէկ, շատ յաջողութեամբ սկսան և խաղին առաջին կոլն ալ կրցան ընել, սակայն տասը վայրկեան խաղէ վերջ իրենց աջ բացը Սարգիս անհանգիստ ըլլալով, ստիպուեցաւ ձգել դաշտը։ Քուրթուլուշ այսպէս տասը հոգիով խաղաց առաջին խաղամասը։

Բերացիք օգտուելով այս առիթէն կրցան մէկ կոլը երեք հատով փոխադարձել։ Առաջին խաղամասը 3—1ով իրենց ի նպաստ վերջացաւ։

Բ. Խաղամասին Քուրթուլուշ լաւ դիմադրութիւն մը ըրաւ։ Դատաւոր Ֆարուք հայածեալ որոշումով մը դաշտէն դուրս հանեց պէք Կարօն և Քուրթուլուշ ինը հոգիով խաղաց գրեթէ ամբողջ Բ. խաղամասը, բայց մի զարմանաք որ այս տկար կազմովը կրցաւ երկրորդ կոլ մըն ալ ընել և միակ կոլի տարբերութեամբ մը խաղաց բաւական երկար ատեն։ Խաղը լրանալու մօտ սակայն Մաաթի տուած մէկ բասը պատճառ եղաւ որ Բերա չորրորդ կոլ մըն ալ ընէ։ Ասոր յաջորդեց Վասիլիատիսի անսպասելի հարուածով մը ըրած կոլը։

Այսպէսով Բերացիք 5—2 մեծ կոլ տարբերութեամբ մը վերջացուցին մրցումը։

ՊԷՇԻՔԹԱՇ 3 ԱՆԳԱՐԱԿԻՒՃԻՒ 1

Ազգային քաթէկորիի մրցումներէն Պէշիքթաշ — Անգարակիւճիւ խաղը երէկ տեղի ունեցաւ Շերէֆ սթատին մէջ։ Անգարացիքը որ 2—1 յաղթած էին Կիւնէշի, չի կրցան պէտք եղած խաղը ցոյց տալ և պարտուեցան 3—1ով։

Իզմիրի մէջ ալ մրցեցան Անգարայի Կէնչլէրպիրլիղի և Իզմիրի Իւչօք խումբերը։ Անգարացիք կոռովի խաղով մը յաղթեցին 2—1 կոլով։

Ազգ. քաթէկորիի մրցումներուն մէջ առաջին տեղը կը գրաւէ Պէշիքթաշ՝ 12 կէտով։ Բ. կուգայ Կէնչլէրպիրլիղի՝ 11 կէտով։

ՆՈՐ ՇԻՇԼԻ ՅԱՂԹԵՑ Թ. Ե. Ե. ՔՈՒՐԹՈՒԼՈՒՇԻ 5-2 ԿՈԼՈՎ

Երէկ, կէսօրէ վերջ, Թաքսիմի սթատին մէջ, Նոր Շիշլիցիք Թ. Ե. Ե. Քուրթուլուշի դիմաց խաղացին «Աքօհմաթին» թերթին բաժակի երկրորդ մրցումը։

Հազար հինգ հարիւրի մօտ հանդիսատես կը հետեւէր այս մրցման։

Դատաւոր կեցած էր Կիւնէշէն Ֆարուք։ Նոր Շիշլի պահած էր անցեալ Կիրակիի իր կազմը. Ֆէրուխան, Գրիգոր, Ալպէր, Տրաքուլիս, Նուպարիկ, Մարթեան, Զաւէն, Ժիրայր, Սուլտուր, Տիրայր, Մկրտիչ։

Խաղը սկսաւ թէ չէ, Նոր Շիշլի տիրապետել սկսաւ. Թ. Ե. Ե. Ելլտըզի պաշտպանողականը շատ տկար էր՝ Նոր Շիշլիի յառաջապահները դիմագրաւելու համար։ Հազիւ հինգ վայրկեան անցած, բերդին դիմացը գտնուող Սուլտուր, ձախ հարուածով մը՝ ձախ կողմէն և բարձրէն առաջին կոլը նշանակեց. քանի մը վայրկեան վերջ ալ, անձնական յառաջխաղացումով մը՝ երկրորդ կոլը։

Երրորդ կոլը չուշացաւ. այս անգամ նշանակողը եղաւ Ժիրայր (Միքրօպ) որ Սուլտուրի լաւ մէկ դարձուածքը լաւագոյն կերպով օգտագործեց և բերդին աջ կողմէն ու գետնէն չորրորդ կոլ մը նշանակեց։ Չորրորդ կոլը նշանակողն էր նոյնպէս Ժիրայրը որ աջ բացէն օդէն եկած գնդակը գլխու հարուածով մը բերդին մէջ նետեց։

Իրարու յաջորդող այս չորս կոլերը քիչ մը զարմացուցին Սթատիում յաճախողները. երկար անյաջողութիւններէ վերջ, Նոր Շիշլի կրկին իր կարողութիւնը ցոյց կուտար։

Թ. Ե. Ե. Ելտըզի տղաքը այս կոլերէն վերջ, մեծ ճիգեր ընել սկսան և կոլ նշանակելու քանի մը առիթներ ստեղծեցին, բայց աջ բացերնին շատ անճարակօրէն փախցուց այս առիթները. վերջապէս Գրիգորին մէկ սխալին պատճառով, Ցոյները կոլ մը կրցան ընել։ Խաղամասը լրացաւ 4—1։

Երկրորդ խաղամասի սկիզբները գնդակը հաւասարապէս երկու կողմերը գնաց եկաւ, բայց Թ. Ե. Ե.ի տղաքը աւելի ճնշող խաղի մը սկըսան, գնդակը Նոր Շիշլիի բերդին աղեղէն չէր հեռանար, Ֆէրուխան լաւ կոլ մը ազատեց, բայց գնդակը գնաց հակառակորդ ձախ ծայրին։ Ցոյներուն լաւագոյն յառաջապահը եղող այս խաղացողը շատ ուժեղ և անմիջական հարուածով մը իրենց երկրորդ կոլը նշանակեց։

Այս կոլը յուսադրեց իրենց համակիրները, բայց հինգ վայրկեան վերջ Նոր Շիշլիցիք կրկին սկսան տիրապետել։ Պէք Գրիգոր Զաքըրին հետ իր տեղը փոխեց։ Խաղը վերջանալու մօտ էր, Գրիգոր աջ կողմէն լաւ դարձուածք մը ըրաւ և Սուլտուր գլխի հարուածով մը նշանակեց Նոր Շիշլիի հինգերորդ կոլը։

Խաղը լրացաւ 5—2 Նոր Շիշլիի յաղթանակովը։

Նոր Շիշլիի լաւագոյն խաղացողները եղան Նուպարիկ, Մարթեան, Սուլտուր, Զաւէն, Ժիրայր։ Մկրտիչի և Ալպէրի խաղն ալ գոհացուցիչ էր։

ԳԻՇԵՐԱՅԻՆ ԹԷՅԱՍԱՐ ԹՕԳԱԹԼԵԱՆԻ ՍՐԱՀՆԵՐՈՒՆ ՄԷՋ

17 Ապրիլ 937 Շաբաթ գիշեր ժամը 10ին

Բրօֆ. ՆՇԱՆԵԱՆ նախորդները գերազանցող թէյասար մը կը սարքէ՝ որ կը խոստանայ հաճելի ժամանց մը վայելել տալ հրաւիրեալներուն։

Այժմէն պատրաստութիւններ կը տեսնուին (Կարմիր Կիրակիի առթիւ) կարմիր քօթիլյօններ և հետաքրքրական անակնկալներ ցոյց տալու համար։

Ծանօթ.— Մութ գոյն հագուստը պարտաւորիչ է։

ԹԱՂ. ԼՈՒՐԵՐ

ԿԵՍԱՐԻՈՅ ԸՆԾԱՅԱՑՈՒ ՀԱՅԿԱԶՈՒՆ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ՔԱՀԱՆԱՅ ՁԵՌՆԱԴՐՈՒԵԼՈՎ ՀԱՅԿԱԶՆ ԿՈՉՈՒԵՑԱՒ

Գայսէրիի Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ քահանայական ընծայացու տիրացու Հայկազուն Կարապետեանի աւագ սարկաւագութեան աստիճան տրուեցաւ չաբաթ առտու, Բանկալթիի Ս. Լուսաւորիչ եկեղեցիին մէջ, պատարագի միջոցին, Ասլանեան Ս.ի կողմէ։

Սրբազանը նոյն իրիկունն ալ Պէյօղլուի Ս. Երրորդութիւն եկեղեցիին մէջ կատարեց յիշեալին քահանայական կոչման նշանակալից և յուզիչ արարողութիւնը, զգեստաւորուած և չախալթագ ի գլուխ, կարդալով Մաշթոցի կանոնական հատուածները և հարցումները, շըրջապատուած շուրջառակիր քահանաներէ և Դպրաց Դասէն։ Ստուար ժողովուրդ կար եկեղեցին։

Երէկ առտու կանուխէն ժողովրդեան խուռն երկսեռ բազմութիւն մը, որու մէջ աչքի կը զարնէին մեծ թիւով ձեռնադրելիին ծանօթ կամ հայրենակից կեսարացի ազգայիններ, լեցուցած էր ամբողջովին Ս. Երրորդութիւն եկեղեցին ու վերնատունը։ Պատարագիչ Պէյօղլուի եկեղեցեաց քարոզիչ Տ. Գէորգ Արքեպիսկ. Ասլանեան, որու կը սպասաւորէին Տ. Յուսիկ Քէբէնթէճեան և Տ. Ներսէս Կէօյպաշեան քահանաները։ Բացի Պէյօղլուի քահանայից դասէն, ներկայ էին նաեւ Պէշիքթաշի աւագերէց Տ. Սմբատ Ա. քհնյ. Գուրմաեան և Կէտիկփաշայի Տ. Գուրգէն քհնյ.։

Հանդիսաւոր և խիստ տպաւորիչ եղաւ քահանայական ձեռնադրութիւնը և օծումը զոր կատարեց Ասլանեան Սրբազան, Պատարագի միջոցին։ Ն. Սրբազնութիւնը Մաշթոցի կանոնական ընթերցումներով հետզհետէ տուաւ ընծայացուին սեւ փիլոն, արտախուրակ, սաղաւարտ և շուրջառ կրելու, Աւետարան կարդալու, Մկրտութիւն կատարելու, Ս. Հաղորդութիւն մատակարարելու և քահանայական միւս բոլոր ծէսերու և արարողութեանց արտօնութիւնը։ Ապա Առաքելոց Աղաւնոյ չարականը երգուելով, սրբալոյս միւռոնով կարգաւ օծեց նորընծային ճակատը, աջ ու ձախ ձեռքերը, կոչելով զայն ՏԷՐ ՀԱՅԿԱԶՆ ՔԱՀԱՆԱՅ։ Ցետոյ նորընծան պատարագի զգեստներ հագած, «Խորհուրդ Խորին»ով խորանին եռեւէն սեղան առաջնորդուեցաւ և իր անդրանիկ օրհնութիւնը տուաւ ժողովուրդին։

Ձեռնադրութենէն վերջ պատարագիչ Սրբազանը «Մի՞ անփոյթ լինիր զշնորհացդ որ ի քեզ են, որ տուաւ քեզ մարգարէութեամբ ՚ի ձեռնադրութիւն Երէցութեան» ծըրնաբանով գեղեցիկ քարոզ մը խօսելով պարզեց քահանայական կոչման բարձրութիւնը և վսեմութիւնը եւ յորդորեց նորընծան ըլլալ ժողովրդեան ու անշահախնդիր «մշակ առանց ամօթոյ» ըլլալով անոր ցաւին ցաւակից և ուրախութեան ուրախակից։

Պէյօղլուի Դպրաց Դասու անդամները, դպիրները և երգեցիկ մանուկները խիստ ներդաշնակ կերպով կատարեցին պատարագի երգեցողութիւնները։ Եկեղեցին աւարտելէ վերջ, ժողովուրդը նորընծայ քահանային օծեալ Ս. Աջը համբուրեց և անոր օրհնութիւնը ստացաւ։

Ձեռնադրութեան և օծման հանդէսին ներկայ էին Պէյօղլուի, Ֆէրիգիւղի, Կէտիկ Փաշայի, Գումգաբուի Դուրսի Թաղ. Խորհրդոց անդամները և բազմաթիւ ծանօթ անձեր որոնք շնորհաւորեցին նորընծան։ Ասլանեան Ս. Խորհրդարանին մէջ ալ յորդորական մը ուղղեց նորընծայ Տէր Հօր, բացատրելով իր պարտականութիւնները։

Հաթայի դատին շուրջ

Պ. ԵՈՒՆՈՒՍ ՆԱՏԻԻ ԽԻՍՏ ԿԱՐԵՒՈՐ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԸ

Մեր մեծ պաշտօնակից «Ճումհուրիյէթ» օրաթերթի մէջ, այսօր Եունուս Նատի խիստ կարեւոր առաջնորդող մը ստորագրած է։

Ցարգելի Եունուս Նատի, Հաթայի դատին մէջ տեղւոյն Հայերուն ցոյց տուած քորրէքթ վարմունքը քանի քանի առիթներով իր յօդուածներուն մէջ խնդրոյ նիւթ ըրած էր, մասնաւորաբար Հայերու անկեղծ ու հարազատ հայրենակիցներ ըլլալուն ջերմ հաւատացող մը ըլլալով, այս մասին «Ճումհուրիյէթ» օրաթերթի սիւնակներուն մէջ ստորագրած է խիստ կարեւոր յօդուածներ։ «Ժամանակ» օրը օրին թարգմանաբար տուաւ այս գրութիւնները, և իր կարգին հետեւեցաւ՝ «Ճումհուրիյէթ»ի հետեւած ճանապարհին։

Սուրիոյ աւազակային կազմակերպութիւններուն և «պաշը պօզուք»ներու վանդալութիւններուն շուրջ գրած այսօրուան յօդուածով, Ցարգելի Եունուս Նատի շատ կարեւոր խորհրդածութիւններ կ'ընէ, յօդուածին վերջին մասը նոյնութեամբ կուտանք ստորեւ.

«Գաղթային պաշտօնատարներու ընթացքին հետեւանքները և պատասխանատուութիւնը ճշդել՝ մեզմէ աւելի Ֆրանսայի կ'իյնայ։ Նոյնիսկ Դաշնակ Քօմիթէէն դուրս մնացող Հայերը Թուրքերուն դէմ թշնամութեան մէջ բնաւ տեղ չունին, իսկ Դաշնակ Քօմիթէն Սուրիոյ մէջ գործունէութեան միջոցները, նորէն տեղւոյն բօլիթիքաճիները և գաղթային պաշտօնատարներն են։

Մենք չենք աճապարեր, կը դիտենք, կը տեսնենք, կը սպասենք և մանաւանդ սպասելը շատ լաւ գիտենք»։

ԲԱՆԿԱԼԹԻԻ գերեզմանատան Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ Հոգաբարձութեան նորակազմ դիւանի ղանձապետ Տիար Միհրան Աստուրեանի մականունը սխալմամբ Սարաֆեան գրուած ըլլալով, կը խընդրուի ճշդել։

ՌԱՏԻՕ ԻՍԹԱՆՊՈՒԼ

Այսօրուան ցայտագիր

Իսթանպուլ

18.30 բլաքով պարի երաժշտութիւն, 19.30 Աֆրիկէի որսորդական յիշատակներ, 20 Րիֆաթ և ընկերները՝ Թուրք երաժշտութիւն և ժողովրդ. երգեր. 20.45 Սաֆիյէ և ընկերներուն կողմէ Թուրք երաժշտութիւն և ժողովրդային երգեր, 21,15 օրքէսթր, 22,15 աժանս և սակարանի լուրեր, 22.30 բլաքով սօլօներ, օբէրա և օբէրէթի կտորներ։

Վիեննա

18.45 երաժշտութիւն, 21.05 օրքէսթրի նուագահանդէս, 23.25 կրամոֆոն, 24.35 լուրեր։

Այրի Տիկին Ռօզանէ Պէրպէրեան և պարագաները դառն կսկիծով կը ծանուցանեն մահը իրենց ամուսնոյն և ազգականին՝

ՏԻԱՐ ՌԱՓԱՅԷԼ ՕՏԱՊԱՇԵԱՆԻ

(Մաքսային յանձնակատար)

որ կնքեց իր մահկանացուն յետ կարճատեւ հիւանդութեան։

Յուղարկաւորութեան տխուր արարողութիւնը պիտի կատարուի վաղը՝ երեքշաբթի, ժամը 15ին Գալաթիոյ Ս. Հրեշտակապետ եկեղեցիին մէջ և անտի հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Էտիրնէգաբուի ազգ. գերեզմանատունը։

ԵԸԼՏԸԸՄ կիչէն կը շահի այսօրուան մեծ պարգեւը 200.000 ոսկին զորս վիճակած է 22046 թիւին։ Տոմսակին տէրն է Թարլապաշի. Եաղհանէ փողոց թիւ 5 Քսէնոֆօն։ Պ. Հայկ Փափազեան այսպէսով միշտ իր վրայ կը պահէ առաջնութեան ռէքօրը։

ՕԴԱՆԱԻԱՑԻՆ վիճակահանութեան երէկի թիրաժին մեծ պարգեւը 25,000 ոսկին շահած է Էմինէօնիւի Սէվինճ կիչէէն ծախուած 3068 թիւ տոմսակը, որուն տէրն է Շէհիր Էմինի 98 թիւ տունը բնակող Պալ Հասան։

ՆԱԽ ՏՆՏԵՍ. ՁԵՆԸՆԿԵՑՈՒԹԻՒՆ
ԱՊԱ ՔԱՂԱՔԱԿԱՆՆ ՈՒ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆԸ

Գրեց՝ ԱՐՏԱՇԷՍ ԳԱԼՓԱՔՃԵԱՆ

Տրամաբանութեան մէջ «յոռի շրջան» կամ «կրկնութիւն սկզբան» կ'ըսեն, երբ ճշմարիտ կ'ենթադրուի ա՛յն որ արդէն խնդրոյն նիւթն է։ Եւ ճիշդ «յոռի շրջան» մըն է որ կ'ըլլայ հիմա՝ համաշխարհային խաղաղութիւնը վերահաստատելու համար եղած ձեռնարկին պահուն։

Հեռագիրներէն կը տեղեկանանք թէ տարիներու խառնակ վիճակէն ձանձրացած, և գո՛նէ պահ մը իրենց ժողովուրդին հանգիստ կեանք մը ապահովելու համար, Մեծ Պետութեանց վարիչները որոշած են լուրջ միջոցներ ձեռք առնելով համաշխարհային խաղաղութիւնը վերահաստատել։ Բայց ի՞նչպէս և ո՞ւրկէ սկսիլ։

— Այս խիստ կարեւոր հարցին բնական և բանաւոր պատասխանը կ'ըլլայ.— Դադրեցնել զինուորական սպառազինութիւնները, որուն ամէն երկիր ահագին գումարներ կը յատկացնէ։ Բայց ի՞նչպէս դադրեցնել սպառազինութիւնը, երբ քաղաքական կնճռոտ խնդիրներ անվերջ իրարու կը յաջորդեն և զինուած պատերազմ մը անխուսափելի կը դարձնեն։ Սպառազինութիւնները դադրեցնելու համար անհրաժեշտ է քաղաքական համաձայնութիւնը։ Բայց ի՞նչպէս կարելի է քաղաքական համաձայնութիւն, երբ տնտեսական վիճակի գործադրութիւններ շարունակ կը պղտորեն պետութեանց յարաբերութիւնները։

Ո՛չ, կ'ըսեն շատեր, պէտք է միջազգային համերաշխ գործակցութեան սկսիլ տնտեսականէն, որովհետեւ երբ մարդիկ իրենց կեանքէն, իրենց ապրուստէն գոհ ըլլան, չեն խորհիր իրենց դրացիին հացը խլել. այդպէս են նաեւ պետութիւնները։

Բայց ի՞նչպէս կարելի է տնտեսական համերաշխ գործակցութեան խօսքը ընել, մանաւանդ սա պահուս, երբ ամէն տէրութիւն պատերազմական տենդագին պատրաստութիւն կը տեսնէ. Անգլիա ՄԷԿՈՒ ԿԷՍ ՄԻԼԻԱՐ ԱՆԳԼ. ՈՍԿԻ յատկացուց, աւելցնելու համար իր բոլոր ուժերը։ Ֆրանսա տակաւին նոր քուէարկեց ՏԱՍԸ ՄԻԼԻԱՐ ֆրանք՝ յատկացնելու համար իր զինուորական պէտքերուն, իսկ Գերմանիա իր կարողութենէն աւելին կ'ընէ, Անգլիոյ՝ և Ֆրանսայի հասնելու համար։

Այս պայմաններուն մէջ կարելի՞ է քաղաքական համաձայնութիւն, տնտեսական գործակցութիւն։ Եւ իսկապէս տրամաբանութեան «յոռի շրջան» մըն է սա մտածումը թէ, ո՞ւրկէ պէտք է սկսիլ, համաշխարհային խաղաղութիւնը վերահաստատել կարենալու համար։

Եւ շատ ուշագրաւ պարագայ մը կայ, սա թէ տնտեսական տագնապը, որ տարիներով բովանդակ աշխարհը անտանելի անձկութեան մը մատնեց, փարատած են հիմա անոր գլխաւոր պատճառները։ Չէ՞ որ տագնապին պատճառ կը վերագրուէր ապրանքներու դիզուած ահագին սթօքներուն անվաճառ մնալը և անոնց՝ նոյն իսկ արժեգինէն աւելի պակաս գնով գնորդ մը չի գտնուիլը։

Բայց այսօր բոլորովին փոխուած է կացութիւնը։ Այս սթօքները հալած, սպառած են, և շատ տեսակ ապրանքներու ալ պակասը զգալի կ'ըլլայ առեւտրական հրապարակին վրայ։ Իսկ գիները բարձրացած են ամանք տարապայման չափով։

Գիտենք թէ Ամերիկայի հանրապետութեան նախագահ՝ Րուզվէլթ բուռն պայքար մը կը մղէ իր երկրին գործիմարդոց հետ, և վերջերս ամէն օր կը լսենք գործադուլի մը սպառնալիքը։ Ամերիկայի մէջ գործաւորները օրականի յաւելում կը պահանջեն իրենց գործատէրներէն, ու Րուզվէլթ իրաւունք կուտայ անոնց, ըսելով որ գործատէրներ պէտք է բաժին մը հանեն գործաւորներուն՝ իրենց ահագին շահերէն։

Նիւ Եորքէն հեռագիր մը երէկ կ'ըսէր թէ պղինձը կը ծախուի 18 սէնդի, մինչդեռ կարելի է ծախել 8—9 սէնդի և շահ ալ ընել։ Առեւտրական հրապարակի վրայ գրեթէ բոլոր ապրանքները քիչ շատ վրայ դրած են։ Արդ, երբ այսպէս վերցած են այս ու ասոնց նման պատճառները, ինչո՞ւ համար, ընդհանուր առմամբ, առեւտր. գործերը չեն բացուած, ոգեւորութիւն մը տակաւին չտիրեր հրապարակին վրայ։

Պատասխանը շատ պարզ է։

Քաղաքական հաշիւներով, պատերազմական նկատումներով ամէն երկիր դրած է ազատ վաճառականութիւնը կաշկանդող արուեստական միջոցներ, Քօնթրօլ, Քօնթէնժան, Քլիրինկ և տակաւին ասոնց նման ուրիշ տեսակ տեսակ սեղմումներ, որոնք ո՛չ մէկ օգտակարութիւն ունին, և ընդհակառակը ազատ փոխանակութիւնը կ'արգիլեն, կեանքը կը սուղցնեն ի վնաս ժողովուրդին։

Եւ այս կացութեան առջեւ վերջապէս Անգլիա և Ֆրանսա համաձայնելով որոշած են տնտեսական համաշխարհային գործակցութիւն մը հաստատել, համոզուելով թէ տնտեսականը դուռ պիտի բանայ քաղաքականին. տնտեսական ու քաղաքական համաձայնութիւնները միացած, առիթ մը պիտի ըլլան որ զինուորականը ինքնաբերաբար կըրճատուի։

Արդարեւ, Լոնտոնի և Բարիզի կառավարութիւնները, ամերիկեան կառավարութեան հետ համախորհուրդ, դիմեցին Պելժիոյ վարչապետ Մ. Վան Զէլանտի և խնդրեցին անկէ որ տնտեսական զէնընկէցութեան համար ուսումնասիրութիւն մը ընէ և յատակագիծ մը պատրաստէ։ Վան Զէլանտ ընդունեց առաջարկը և կարգ մը վաւերագիրներ ձեռք անցուց, իր ստանձնած գործը գլուխ հանելու համար։

Եւ սակայն խնդիր է թէ Վան Զէլանտ պիտի կրնա՞յ, տնտեսական համաշխարհային համաձայնութեան համար, գործնական յատակագիծ մը պատրաստել։

Պելժիոյ վարչապետը միջազգային դէմք մըն է։ Մանաւանդ մասնաւոր ուշադրութիւն գրաւեց, կառավարութեան ընդդիմադիր կուսակցութեան՝ Րէքսիսթներուն (պելժ ֆաշիսթ) ղեկավար Տըկրէլի՝ ընտրական պայքարին առթիւ ըրած յարձակումները։

Տըկրէլ «տիքթաթօր» կ'որակէ Վան Զէլանտը, մինչդեռ այս վերջինը կ'ըսէ.— «Ես արկածախնդիր մարդու հետ գործ չունիմ։ Իմ խօսքս կ'ուղղեմ բոլոր անկեղծ ու ազգասէր քաղաքացիներուն և կը խնդրեմ որ ինծի հետ աշխատին հայրենիքին օգնութեան համար։»

Իսկ եթէ Անգլիա և Ֆրանսա համաշխարհային տնտեսութիւնը բարեկարգելու կնճռոտ և փափուկ գործին ուսումնասիրութիւնը Վան Զէլանտի յանձնել յարմար տեսան, առիկա չի՞ հաստատեր թէ անոնք բացառիկ կարողութիւն մը տեսան Պելժիոյ վարչապետին վրայ։

Եւ արդարեւ այդպէս ալ է։ Վան Զէլանտ շատ մեծ զարգացում ունի, իր այս մասնաւոր կարողութիւնով որպէս կատարեալ պետական մարդ մեծ համբաւ հանած է քաղաքական աշխարհի մէջ։

Թէ Վան Զէլանտ պիտի կրնայ յաջողութեամբ գլուխ հանել իրեն յանձնուած գործը, կասկած չկայ ատոր։ Նաեւ կասկած չկայ որ տնտեսական զէնընկէցութեան առաջին պայման պիտի դնէ միջազգային վաճառականութեան ազատութիւնը, ինչ որ կ'ըլլայ ծանր մաքսատուրքերու, քօնթէնժանի եւայլն սեղմումները վերցնելով։

Տնտեսական աշխարհը անձկութեամբ կը սպասէ, առեւտրական այդ ազատութեան և Վան Զէլանտի պատրաստելիք յատակագծին գործադրութեան։

ԱՆԳԼԵԻՏԱԼԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԾՈՎԵՐՈՒ ՎՐ[Ա]
ԻՏԱԼԻՈՅ ԾՈՎԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ ԱՆԳԼԻՈՅ ՊԱՏԱՍԽԱՆ ԿԸ ՆԿԱՏՈՒԻ
ԵՐԿՈՒ ԾՈՎԱՅԻՆ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ԿԵԱՆՔԻ ՊԱՅՔԱՐԸ
ԱՆԳԼԻԱ 100 ՄԻԼԻՈՆ ՏԱԿԱՌ ՔԱՐԻՒՂ ԱՊՍՊՐԵՑ ԱՄԵՐԻԿԱՅԷՆ



Անգլիական մամուլը Իտալիոյ ծովային նոր ծրագրով խիստ մօտէն կը հետաքրքրուի և այս մասին շատ մը մանրամասնութիւններ կուտայ։ Այս տեղեկութեանց համաձայն Իտալիոյ նաւատորմը առաջին անգամ ըլլալով արդիական զրահաւորներ կ'ունենայ իր շարքերուն մէջ։ 1935ին շինութեան ձեռնարկուած «Բավուր» և «Սէզար» մարտանաւերը արդէն իսկ աւարտած են։ Իւրաքանչիւրը 23,600 թօն տարողութեամբ են և բաւական ծանր թնդանօթներ ունին։ Նախկիններուն նայելով այս նաւերը աւելի երկար, աւելի արագ և աւելի ծանր են։

Հապէշական խնդրին առթիւ ծագած անգլեւիտալական տարակարծութեան առեն Իտալացիք ամենէն մեծ տկարութիւնը Իտալիոյ արդիական մեծ զրահաւորներու պակասին մէջ կը կայանար, իսկ այսօր «Բավուր» և «Սէզար» երկու մեծ զրահաւորներ են։

Նոր շինութեանց գաղտնիքը

Իտալիոյ ծովային նոր շինութեանց ծրագիրը բացարձակապէս գաղտնի կը պահուի։ Նոր մարտանաւերուն տեսակը և ուժը նոյնիսկ խորհրդարանէն գաղտնի պահուած է։ Նոր ծրագրին մէջ, նաւատորմին և օդային պաշտպանութեան վերակազմութեան մասին միայն կը խօսուի։

Ծովային ուժը, այս տարեգլխուն, 55 հազարի պիտի հասնի։ Նոր ծրագրին համաձայն, այս թիւը հետզհետէ պիտի աւելնայ։ Իտալիոյ ծովային նոր պիւտճէն 20 միլիոն սթերլին է, ինչ որ նախորդին վրայ 2 միլիոն 600 հազարի յաւելում մը կը նշանակէ։

Կիպրոսին պատասխան

Իտալական ծովային նոր ծրագրին մէջ, կ'ըսուի թէ իր ծովային պատրաստութիւնը պատասխան մըն է Անգլիոյ՝ Միջերկրականի, Կարմիր ծովու և Հնդկաց ովկիանոսի պատրաստութեանց։

Անգլիոյ՝ Միջերկրականի արեւելեան կողմը ծովային կայաններ ստեղծելու բաղձանքը և Կիպրոսի մէջ ծովային կայան մը շինելու ծրագիրը պատճառ եղած են որ, Իտալիա պատրաստէ իր ծովային նոր ծրագիրը։

Իտալական ծովային սպառազինութեան դէմ ուրիշ միջոց մըն ալ ցոյց կուտան Սինկաբուրի անգլիական ծովային կայանին շինութիւնը։ Իտալական ծրագրին մէջ կ'ըսուի թէ, Անգլիոյ այս պատրաստութեանց դէմ, Իտալիա պէտք կը տեսնէ Կարմիր ծովու և Հնդկաց ովկիանոսի իր կայանները աւելի եւս ամրացնել։

Այս առթիւ անգլ. թերթերը կը յիշեցնեն Միջերկրականի ամենէն կարեւոր իտալական կայանին՝ Սբեցիայի և անոր կցուած արեւմտեան նաւատորմին հրամանատար ծովակալ Ֆօէի Էրիթրէի կուսակալ-կառավարիչ անուանուիլը և զայն կը նկատեն առաջին քայլ մը Կարմիր ծովու իտալ. սպառազինութեանց ծրագրին։

Իտալիա իր ծրագրին մէջ կ'ըսէ թէ նպատակը սպառազինութեանց մրցակցութիւն չէ, այլ ինքզինքը պաշտպանելու համար սպառազինուող միւս պետութիւններէն և մանաւանդ Անգլիայէն ետ չմնալ է։

Մէկ խօսքով Իտալիա Անգլիոյ սպառազինութեան ծրագրին կը պատասխանէ իր ծովային սպառազինութեան նոր ծրագրով։

Անգլիոյ պատրաստութիւնը

Ասոր փոխարէն Անգլիա ալ պարապ չնստիր։ Անգլ. թերթերը բացէ ի բաց կը գրեն թէ Անգլիա մեծ սահմանի մէջ պիտի սպառազինուի և այս առթիւ պէտք եղած նախանիւթը պիտի գնէ Ամերիկայէն։

«Տէյլի Էքսբրէս»ի Ուաշինկթընի թղթակիցը կը գրէ իր թերթին։

Անգլիա պատերազմի պատրաստութեան նպատակով Ամերիկայէն մեծ քանակութեամբ քարիւղ պիտի գնէ։ Թէքսասի քարիւղի ընկերութեանց հրաման տրուած է Անգլիոյ հաշուոյն 100 միլիոն տակառ քարիւղ պատրաստել։ Այս ապսպրանք[ը] Անգլիա պիտի ղրկուին, ընդհ[անուր] պատերազմին Անգլիոյ համար Ամ[երի]կայէն առժամնիթ ելլ. հայ[թայ]թող ընկերութիւնը։

Արտածումը անմիջապէս [պիտի] սկսէր, բայց Ամերիկայի նե[ր]գործավարութիւնը գործին մ[իջա]մտեց։ Հիմա քարիւղի ընկ[երու]թեանց տէրերը կառավարու[թեան] հետ շփման մէջ են, որպէս զի [անգ]լիական ապսպրանքը արտածե[ն]։

Անգլ. կառավարութիւնը գաղթավայրերէն և գաղթավա[յրու]թիւններէն կրնայ ուզած ք[անա]կութեամբ քարիւղ հայթ[այթել], բայց ամերիկեանը շատ լա[ւ] ... գայ օգնութեան և մ... գէտներ փափաքած են ամերի[կեան] քարիւղ գործածել։

Եթէ Անգլիա շատ շուտով [ըն]դունի ապսպրանքը, ամերիկեան [ընկե]րութիւնը կը ծրագրէ 1000 ... հեռաւորութեան վրայ խող[ովակ]ներ շինելով քարիւղը մինչև ... փոխադրել և անկէ մեծ ... թեամբ արտածել։ Ամերիկեան ... րիւղները Անգլիա հասնելէ ... հոն գետնափոր և ամէն ... ռմբակոծումէ զերծ եղող մեծ ... բանոցներու մէջ պիտի ամբ[արուին] ու պատրաստ պիտի պահուին ... առջիկայ պատերազմի մը գործածուելու համար։

Ահա այսպէս Անգլիա և Ի[տալիա] այսպէս ալ անձայն պայքար ... մղեն, բայց երբ խորհինք թէ ... լիա անպարտելի ալպիօնի ... ակամայ այն համոզումը կ'ու[նենանք] թէ Իտալիա ալ օր մը Գեր[մանիոյ] նման պիտի կրէ Անգլիոյ գլուխ ցցելուն պատիժը։

ՕԳՏԱԿԱՐ ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՄԸ
ԲՈԼՈՐ ՏԻԿԻՆՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

ՏԻԿԻՆՆԵ՛Ր, ԵԹԷ Կ'ՈՒԶԷՔ ԳԵՂԵՑԿԱՆԱԼ
Գործածեցէք միմիայն ծանօթ տոկիւս
ՏԱՃԱՏ ԿԻՒԼԷՐԻ (ՏԷՐՏԷՐԵԱՆ)
Arda եւ Biricik Acı badem
անզուգական և հրաշալի քրէմները, որոնք մասնաւոր թարմութիւն մը կուտան մորթին, կ'անհետացնեն բիծերը, դէմքի խորշոմները և շնորհիւ իրենց բովանդակած բուսական թերուն, կը զօրացնեն և կը սնուցանեն մորթը։
Կը ծախուի Պէյօղլու, Հաճօբուլօ բասաժ թիւ 38, Տաճատ ... տէրեանի (Կիւլէր), անուշահոտութեան մեծ վաճառատունը, ... նաեւ բոլոր դեղարաններուն և նման հաստատութիւններուն մէջ։

ՍԻՆԻՄԱՅԻ ԲԱԺԻՆ

ԵՐԲ ՓՈՔՐԻԿ ՏՂԱՆ

Կ'ԵՐԵԻԻ ՊԱՍՏԱՌԻՆ ՎՐԱՅ

Բեմի վրայ, փոքրիկ տղաք մեծի երեւոյթ կը ստանան։ Մինչդեռ պաստառին վրայ, ընդհակառակը, անոնք կը պահեն իրենց մանկական երեւոյթը ու կը խաղան այնպէս ինչպէս որ են, այսինքն փոքր տղու մը պէս։

Այս է համոզումը Մ. Անտռէ Լանկի, որ անցեալները իր տուած մէկ բանախօսութեան ընթացքին յայտնած է, քօնֆէրանս՝ որուն բնաբան ընտրած է. «Երբ փոքրիկ տղան կ'երեւի սինէմայի բեմին վրայ...»։

Իր այդ քօնֆէրանսին մէջ, Մ. Անտռէ Լանկի ի մէջ այլոց յայտնած է թէ թատրոնի բեմին վրայ տղաք մեքենաներ կը դառնան պարզապէս, մարդամեքենաներ՝ բռնազբօսիկ, նեղուած ու զուրկ բնական շարժուձեւերէ։ Եւ ասոր ալ պատճառը կայ։ Թատրոնը արուեստական բնոյթ կը կրէ և զինքը շրջապատողներուն վրայ տարբեր ազդեցութիւն մը կը գործէ, մինչ սինէման այդպէս չէ։ Զափահաս արուեստագէտները հոն իրենց տեղը կը գրաւեն ճշդութեամբ, և անոնք գիտեն ճշդիւ ընդօրինակել կեղծիքը, որ իրենց պարտադրուած միակ պահանջքն է։ Սակայն փոքրիկները կը թերանան այդ ուղղութեամբ մանաւանդ թատրոնի բեմին վրայ անոնց խաղարկութիւնը երբեք ուղիղ չի համապատասխաներ իրենց տարիքին հետ և անիմաստ ու անտեղի կանխահասութիւն մը կը նշմարուի անոնց շարժուձեւերուն մէջ։

Եւ Անտռէ Լանկ կը շարունակէ.

— Իրականութեան մէջ, տղոց քով կը պակսի դերասանական տաղանդը։ Իրաւունք չունինք արուեստական շարժուձեւեր պարտադրելով փճացնել անոնց բնական ու պարզ ձեւերը։ Զմոռնանք որ մեծնալը՝ տառապանքն է փոքրիկ աղջկանց։

«Սինէման, ինքը, կը մեծցնէ տղան, բայց երջանկաբար։ Անոր մեծի երեւոյթ կուտայ, պահելով միեւնոյն ատեն փոքրիկ մանուկի մը յատուկ՝ խօսելու և ժէսթերու ազատութիւնը։

Անտռէ Լանկի այս քօնֆէրանսը աւարտելէ յետոյ, բեմի վրայ երեւած փոքրիկ աղջկան մը՝ Ժինէթ Մարպէօֆ որ Շիրլէյի խիստ շատ կը նմանի և որ Ֆօքս ընկերութիւնը Հօլիվուտ զրկեց, «Բուռ Վուռ»ի կողմէ կազմակերպուած մրցումի մը առթիւ։

Հանդիսատեսներու ներկայութեան, Ժինէթ Մարպէօֆ կը խօսի.

— Թեթեւ հարբուխ մը եղած եմ։

Եւ Անտռէ Լանկ կը սկսի խօսակցութեան փոքրիկին հետ։

— Ինչո՞ւ համար քեզի ընտրեցին Հօլիվուտ զրկելու մտօք։

— Որովհետեւ ամենէն աւելի ես եմ որ կը նմանիմ Շիրլէյ Թէմբըլի։

— Ի՞չ տեսար հոն։

— Մեծ մեծ տուներ կային հոն և տունէ մըն ալ «հարիւր երկու» յարկ վեր բարձրացայ։

— Միթէ Շիրլէյ ինքն ալ՝ յայտնեցի թէ իրեն կը նմանիս։

— Ա՛հ, ոչ, չէր կրնար ըսել ասիկա, որովհետեւ ֆրանսերէն չէր գիտեր։

— Ի՞նչ ըրիք միասին։

— «Տիկինի խաղ» խաղացինք։

— Մեծ աստղ մը ըլլալ կ'ուզե՞ս։

— Օ՛հ, այո։

— Ինչո՞ւ համար։

— Որովհետեւ Շիրլէյի նման ֆիլմ մը պիտի դարձնեմ։

— Եթէ մայրիկդ չուզէ՛ այդ բանը։

— Ա՛հ, աւելի գէշ։

Այս «ա՛հ, այս աւելի գէշ» խօսքը յայտնապէս ցոյց կուտար այն վճռական որոշումը, որով նոյնիսկ մայրական կամքին դէմ արտայայտուելու կը մղէր զինքը։

Այնուհետեւ երգեց, պարեց ու սիրուն վառիէթէներ ըրաւ։ Ներկաներուն մէջէն 70 տարեկան ծերունի կին մը գոչեց.

— Բայց զմայլելի է այս փոքրիկը։

Չէի կրնար երբեք խորհիլ թէ այս տարիքը ունեցող մէկը կրնար գնահատել փոքրիկ աղջնակի մը բեմական յատկութիւնները։

Եւ այս հաւաքոյթը վերջացաւ, կարգ մը ֆիլմերէ մէկ սասին միայն ներկայացումներու փորձերը կատարուելէ ետք, փոքրիկ արուեստագէտներու կողմէ, ինչպէս, օրինակի համար, «Միօշ, Թշուառներ, Ֆօնթլըրօյի պզտիկ լօրտը, Շիրլէյ օգանաւորդուհի, Փոսիկները, Գիւղին բժիշկը», որոնց ի տես ներկաները կրկին ծափահարեցին հոն տեսնող փոքրիկ արուեստագէտները՝ Ֆիլիբ մանկիկը, Կապի Թրիքէ, Ֆրէտի Պարթօլօմիու, Շիրլէյ Թէմբըլ և Գանատացի հինգ երկւորեակները։

Ժան Լուի Պարոլ եւ Իվ Միրանթ պաստառին վրայ շատ գեղեցիկ եւ տպաւորիչ բօզով մը

ՄԱԷ ՎԷՍԹԻ ՎԵՐՋԻՆ ԽՕՍՔԸ

ՀՈԼԻՎՈՒՏԻ ՄԷՋ ԱՐՁԱՆՆԵՐ ԿԸ ՇԻՆԵՆ

Հօլիվուտ, Բարամունթի սթիւտիօներուն մէջ առաջ եկած կարգ մը փոփոխութեանց համեմատ, անհրաժեշտ տեսնուեցաւ պէթօնէ շիննուած արձանները ջնջել, որոնք շարժանկարի երեւելի դէմքերու՝ ոտքերուն և ձեռքերուն դրոշմը կը կրէին, ինչպէս, օրինակի համար, Ռօտօլֆ Վալէնթինօ, Լօն Շանէյ, Ճօն Ժիլպէռ, Զարլի Զաբլին, Հարօլտ Լօյտ, Կէրի Քուբըր, Պինկ Քրօսբի, Ճօրճ Բէֆթ, Մօրիս Շըվալիէ, Մաէ Ուէսթ, Քլօտէթ Քօլպէռ, Մարլէն Տիթրիխ, Վ. Ս. Ֆիլտս, Կլատիս Սուարթուըրտ և Սէսիլ Պ. տը Միլ։

Այս երեւոյթին ի տես, այցելու մը, անցեալները, դառնօրէն կ'արտայայտուէր այս աշխարհի և մասնաւորաբար սինէմայի շրջանակներուն մէջ տիրող անհաստատ և անկայուն վիճակի մասին, որով նախապէս շինել հարկ տեսնուած այդ արձանները այսօր աւելորդ կը համարուէին։

Մաէ Ուէսթ, որ յիշեալ այցելուին քովը կեցած ըլլալով լսած էր անոր խօսքերը, դարձաւ անոր ու ըսաւ.

— Այո, սինէման պիտի կրնայ երկար ատեն պահել այն արձանները միայն, որոնք երեւելի և աներեւոյթ աստղերու յետոյքին դրոշմը կը կրեն...։

ՆՈՐՄԱ ՇԷՐԷՐ ԱՄՈՒՍՆՈՅՆ ՄԱՀԷՆ ՎԵՐՋ

ԻՐ ՍԵԻ ԶԳԵՍՏՆԵՐԸ ՀԱԳԱԾ ԿԸ ՄԱՍՆԱԿՑԻ ՀԱՑԿԵՐՈՅԹԻ

Երբ ամուսնոյն յիշատակին մրցանակի մը հաստատուիլը ԿԸ ՅԱՅՏԱՐԱՐԵՆ, ՆՈՐՄԱ ՇԷՐԷՐ ՉԿՐՆԱՐ ԶՍՊԵԼ ԻՐ ԱՐՑՈՒՆՔՆԵՐԸ

ԿԱՐԳ ՄԸ ԿԱՐԵՒՈՐ ՄՐՑԱՆԱԿՆԵՐՈՒ ԲԱՇԽՈՒՄԸ ՀՈԼԻՎՈՒՏԻ ՄԷՋ

Ամերիկեան սինէմայի մեծագոյն յայտնութիւնն էր, որ կատարուեցաւ անցեալները։

Վերջերս, Հօլիվուտի Սինէմայի Արուեստի Ակադեմին ճաշկերոյթ մը տուած էր, ի պատիւ Ամերիկեան սինէմայի անխտիր բոլոր բեմադրիչներու և ընդհանուր աշխատակիցներու, որուն ընթացքին որոշուեցաւ 1936ի լաւագոյն ներկայացումները, իրենց արուեստագէտներով։

Դերասանուհի Լուիզ Բէյնըր «Մեծ Զիկֆիլտը» ֆիլմին համար։

Դերասան Բօլ Միւնի «Լուի քահանային կեանքը» ֆիլմին համար։

Բեմադրիչ Ֆրանք Քաբրա «Լ'Էքսթրավական Մ. Տիտս» ֆիլմին համար։

«Մեծ Զիկֆիլտը» միաձայնութեամբ 1936 տարւոյն լաւագոյն ֆիլմը հռչակուեցաւ։

Միւս կողմէ, գնահատութեան արժանի նկատուեցան նաեւ երկրորդ դասակարգի պատկանող արուեստագէտներ, ինչպէս, Կէյլ Զօնտըրկարտ՝ «Անթօնի Հակառակորդ»ին մէջ իր սահուն խաղարկութեան համար և Ուօլթըր Պրէննըն «Եկուր և առ ասիկա» ֆիլմին համար, ինչպէս նաեւ Ճէք Սիւլլիվան՝ իբրեւ բեմադրիչի օգնական, «Թեթեւ գումարտակին շարժումը» ֆիլմին համար։

Որպէս ինքնատիպ և լաւագոյն սէնարիօ մը, միաձայնութեամբ ընդունուեցաւ «Լուի քահանային կեանքը» ֆիլմը։

Մասնաւոր գնահատութիւն մը եղաւ Տուկլաս Շիրբրի (Նօրմա Շիրբրի եղբայրը) ձայնական արուեստին մէջ իր ունեցած փայլուն յաջողութեան համար։

Ասկէ վերջ, Ակադեմիին անդամներէն բեմադրիչ Ֆրանք Քաբրա յայտարարեց որ, այսուհետեւ բեմադրիչի մը, դերասանի մը կամ ո եւ է աշխատաւորի մը սահմանուած վարձատրութիւնը «Իրվինկ Թալպէրկ» անունը պիտի կրէ, իբր խորհրդանիշ մը, ի յարգանս Հօլիվուտի անզուգական և հեղինակաւոր բեմադրիչին անմոռաց յիշատակին։

Այս առաջարկը որոտընդոստ ծափահարութիւններու տեղատարափով մը ընդունուեցաւ։

Այս խօսքերուն ունկնդիր ներկաներուն մէջէն Նօրմա Շիրբր, Թալպէրկի այրին, որ սեւազգեստ կը մասնակցէր այս հաւաքոյթին, իր ամուսնոյն մահէն յետոյ առաջին անգամ ըլլալով, չկրցաւ զսպել իր յուզումը և արցունքներ սկսան հոսիլ իր աչքերէն։

Ամէն մարդ կը կարծէր թէ հանգուցեալ Թալպէրկի վերջին աշխատութիւնը եղող անմահ Շէյքսբիրի գլուխ գործոց «Ռօմէօ և Ժիւլիէթ» ողբերգութիւնը, որպէս գեղեցկագոյն բեմադրութիւն մը, առաջնութիւն պիտի խլէր, բայց «Մեծ Զիկֆիլտ»էն նուազ քուէ ստացաւ։

ՀԷՔԻՄ ՊԱՇԻ ԷՄԻՐ ՉԷԼԷՊԻ

ԻՆՉ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒ ՏԱԿ ԻՐ ՄԱՀԿԱՆԱՑՈՒՆ ԿՆՔԵՑ

Մուրատ Դ.ի Սիրականը ափիոնամոլ մըն էր, օրին մէկը

ՎԵՀԱՊԵՏԸ ՋԱՅՆ ԹՈՒՆԱՒՈՐԵԼՈՒ ԴԻՏԱՒՈՐՈՒԹԻՒՆՈՎ

ՄԵԾԱՔԱՆԱԿ ԱՑԻՈՆ ԿԼԼԵԼ ՏՈՒԱՒ

Հէքիմ Պաշին հարկադրուեցաւ կուլ տալ բայց քիչ ետք ինկաւ

ԽՈՐ ԹՄՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՈՒ ԱՅԼԵՒՍ ԱՉՔԵՐԸ ՉԿՐՑԱՒ ԲԱՆԱԼ

Ծխախոտը և ոգելից ըմպելին խստօրէն արգիլուած տարիներուն մէջ, 1638, Մուրատ Դ. Պաղտատ կ'երթայ, Իսթանպուլէն Նէզիպ, փատիշահին բանակը արիւնի հետքեր թողած է։ Մուրատ պարապոյ ժամերուն Հէքիմպաշը Էմիր Չէլէպիին հետ կը սիրէր ճատրակ խաղալ, ամէն գիշեր ան զանիկա իր վրանը կը կանչէր, մէկ քանի բառթի ճատրակ կը խաղար և «հէլվայի սէօհպէթ»ի վար կը դնէր զայն։

Սակայն, Հէքիմպաշը Էմիր Չէլէպիի թագաւորին հետ այսքան մօտիկ, ծունկ ծունկի նստելուն շատ ալ հաշտ աչքով չէին նայէր արքային շուրջ գտնուողները, ի մասնաւորի Սիլահտար բաշան որ արքունիքին աւելի մօտիկ ըլլալու էր, երկրորդական դիրքի վրայ ինկած էր, և սակայն չէր ալ համարձակեր Հէքիմպաշին արքային մօտ վարկաբեկելու։

Բանակը Իսթանպուլէն ճամբայ ելլելէ առաջ, Սիլահտար աղան Հէքիմպաշը Էմիր Չէլէպիին մարդ զրկեց և ըսաւ.

— Հաւատարիմ մարդ մը ունիմ, զայն պարտկելդ կը խընդրեմ։

Հէքիմպաշը կարեւորութիւն չտուաւ դիմումին և «հիմակու հիմա, յարմար տեղ չկայ իմ օճախիս մէջ» ըսելով ճամբեց իրեն դիմողը։

Սիլահտար աղա սաստիկ ոխ կապեց և որոշեց իր մարդրցմէն Զէյնէլ Ապիտինը Հէքիմպաշի կարգել։

* * *

Բանակը Պաղտատի ճամբուն վրայ Նէզիպի դաշտը բանակած էր։ Մուրատ Դ. իր վրանին մէջ Հէքիմպաշըին հետ սաթրանճ կը խաղար։

Այս վերջինը քիչ մը օղի խմած էր այդ օրը, «չաքըր քէյֆ» եղած էր։ Ամէն անգամ բառթին դիտմամբ վրայ կուտար և կը ձգէր որ արքան շահած ըլլալուն համար հրճուէր։ Այդ օր ճատրակին վրայ երկու կողմերը իրական ճակատամարտ մը մղեցին, Հէքիմպաշին մտերմիկ շեշտով մը գոչեց.

— Շահին «քըշ» կ'ըսեմ Սուլթանըս։

Մուրատ սրտմտած ցից նայուածք մը ուղղեց իր ծառային, աչքերուն նայեցաւ և հարցուց.

— Դուն գինո՞վ ես այսօր։

Հէքիմպաշիի լեղին փրթաւ, դեփ դեղին կարած էր, իսկոյն վեհապետին ոտքերուն ինկաւ և ըսաւ.

— Ո՛չ տէր իմ, խաղին մէջ տարուեր եմ. ինչ ըսելս չգիտցայ, վիզս մազէ աւելի բարակ է, ներէ ինձ։

Մուրատ խաղը շարունակեց եւ բառթին շահեցաւ, իսկ Հէքիմպաշին քիչ առաջուան վախի ազդեցութեան տակ, դեփդեղին կարած դուրս ելաւ թագաւորին վրանէն։ Ստամոքսը տակն ու վրայ եղած էր ու կերածը դուրս կուտար, Սիլահտարը որ դուրսը Հէքիմպաշիին յուզուած վիճակը տեսած էր, վազեց արքային ատեանը և գոչեց.

— Տէր իմ, այդ սատանա մարդը կեավուռներուն գործածած ըմպելին խմած ու գինով է, ահա հիմա ալ կը փսխէ։

Մարդ չէր հաւատար և չէր ուզեր իր սիրած մարդուն համար ըսուած խօսքին հաւատալ։

Սիլահտարը աւելցուց, ճիշտը կը զրուցեմ և եթէ ըսածս չհաստատեմ, գլուխս թող թռցնէ ճէլլատ պաշին։

Մուրատ, պահ մը մտածեց, ճատրակի տախտակին կից մը տուաւ և դուրս ելաւ վրանէն։

Իրապէս Հէքիմպաշին կը փըսխէր. հեռուէն Սուլթանը տեսնելով, սարսափահար եղաւ։

Սակայն վեհապետը ներեց, խորհելով որ կերած հէլվաէն կրնար ստամոքսը խանգարուած ըլլալ։

Իրիկուն մը, ընթրիքէն ետք Մուրատ կրկին Էմիր Չէլէպին իր վրանը կանչեց։ Կանխաւ լուր առած էր թէ, ոչ միայն արբեցող, այլ ափիոնամոլ մըն էր ան, նոյն իսկ աֆիօնը հագուստին մէջ կը կրէր։

Էմիր Չէլէպի թագաւորը մտածկոտ տեսաւ և քիչ մը շփոթեցաւ, նստիլ հրամայեց թագաւորը, պահ անցնելէ ետք Մուրատ հարցուց Հէքիմպաշիին.

— Աֆիո՞ն ունիս վրադ։

Էմիր Չէլէպի իսկոյն դուրս հանեց թոյնը և ըսաւ. Այո՛, աֆիօն է սակայն թունաւոր չէ։

— Ինչպէս թոյն չէ. եթէ թունաւոր չէ կուլ տուր նայիմ, գոչեց։

Հէքիմպաշին աֆիօնները կլլել սկսաւ, չորս-հինգ կտորներ կուլ տալէ ետք, քիչ ետք թոյնը իր ազդեցութիւնը գործել սկսած էր, երբ թագաւորին ոտքերուն ինկած աղերսեց.

— Խնայէ քու ծառայիդ, Տէ՛ր իմ, և սկսաւ արտասուել։

Սուլթանը անողոք մնաց և բոլոր աֆիօնը մէկ անգամէն կլլել տուաւ Հէքիմպաշիին, ի վերջոյ, սառնասրտութեամբ ըսաւ.

— Նստէ՛ նայիմ, սանթրանճ պիտի խաղանք։

Սակայն Հէքիմպաշին մահուան քրտինք կը թափէր քիչ ետք, թագաւորը ըսաւ. կրնաս երթալ։

Էմիր Չէլէպի մեծ ճիգ թափեց ոտքի ելլելու և երերալով դուրս ելաւ արքայական վրանէն։

Սակայն թոյնը իր գործը տեսած էր, Հէքիմպաշին վերջին անգամ նայեցաւ իր շուրջը. երբ իր վրանը հասաւ արդէն կէս մեռեալ մը եղած էր, և հակառակ հակազդեցիկ դեղերու, ինկաւ խոր թմրութեան մէջ։ Աշակերտները ամէն ջանք թափեցին Հէքիմպաշին ուշքի բերելու համար, բայց ապարդիւն մնաց ամէն ճար ու դարման։

Ահա այսպէս աֆիօնի թունաւորումի զոհ գնաց Մուրատ Դ.ի Հէքիմպաշի Էմիր Չէլէպին։

Nesriyat Muduru
PUZANT SAMLIYAN
Basıldığı yer
BURHANEDDİN Basımevi

24 JOLİ FAM
RUJLARI
SAAT DAYANIR

Մի՛ վարանիք երբ կայ աշխարհահռչակ

ԷՐՎԻԼ ԿՕԼՏԸ

Շոնդալից ծանուցումներու մի՛ խաբուիք, 60 փարանոց շեղբերու անդարմանելի աւերին մի՛ յանձնէք ձեր դէմքերը։ Գնեցէք տուփ մը աշխարհահռչակ ԷՐՎԻԼ ԿՕԼՏ ածելիի շեղբերէն, որոնց քնքուշ ածիլումը իսկական վայելք մըն է։ Դիւրամատչելի գին, բացարձակ երաշխաւորութիւն։

Փնտռեցէք ամէն տեղ

ՃԱՄԲՈՐԴՆԵՐ

Երբ մեր գրասենեակը այցելէք ձեզ պիտի տրուին Բարիզի ցուցահանդէսի և ուրիշ տեղերու մասին ծանօթութիւններ։

Ֆրանսայի և կարգ մը տեղերու զեղչեալ գին։

Ռ. ԱՍԼԱՆԵԱՆՑ շոգենաւային գործակալութիւն, Գարաքէօյ, Բօսթայի դէմը։

Հեռաձայն՝ 42857։

«Ժամանակ»ի թերթօնը = Թիւ 63 =

ՊԷԱԹՐԻՍ

Հեղինակ՝ Ակադեմական ՔԼՕՏ ԷՆՐԻՕ

Գաթալան կանգ առնելով սպասեց որ նախ իր առաջնորդները ներս մտնեն, բայց ծեռքը ճրագ ունեցող մարդը կամաց մը ոտքը Գաթալանի ոտքերուն առջեւ երկարեց իսկ ետեւ մնացողը մարմնին ամբողջ ծանրութեամբ Գաթալանի վրայ նետուեցաւ, չարագործը իր հաւասարակշռութիւնը կորսնցնելով դրան մէջի կողմը ինկաւ։

Հազիւ թէ դուռը վրայէն գոցուած, անվախ Գաթալան իր պաղարիւնը կորսնցուց, խոշոր մուկեր, առնէտներ, մողէսներ, կարիճներ, օձեր անսովոր ձայն մը լսած ըլլալով գլուխնին վերցուցին, իրենց նորեկ թշնամիին վրայ խոյանալու պատրաստուեցան։

Մութ զնտան։

Դուրսէն խնդուքի ձայն լսուեցաւ, ապա առաջին սանդուխին գագաթը բացուող դուռն ալ գոցուեցաւ։

Գաթալան մռնչիւն մը արձակեց, վերէն, պատին ճեղքէն ջուրի բարակ մուղ մը ուսին վրայ կը վազէր։

Կացութիւնը սոսկալի էր, ամէն բան հասկցաւ, Թիպր գետին ալքերուն տակ գտնուող նկուղ մը առաջնորդուած էր, ուր գետէն մղուող ջուրը ճահիճ մը պիտի գոյացնէր, ինք այդ ճահիճին մէջ շրջապատուած սողուններէ. պիտի գալարուէր մինչեւ որ վերջին շունչը սատանային յանձնէր։

Ցերեկ էր, դուրսը անձրեւը արդէն սկսած էր, մութը կոխելէն առաջ գետը պիտի յորդէր, նկուղը պիտի ողողուէր, նկուղը ջրալի հորի պիտի վերածուէր։

Գաթալան խեղդամահ ըլլալու դատապարտուած էր։

Սկսաւ պոռալ, պաղատանքներ, հայհոյանքներ արձակել։

Ջուրը ոտքերուն տակ կը բարձրանար, ծունկերուն կը հասնէր, կը սառեցնէր իր մարմինը։

Գազանի պէս մռնչելով եղունգներով պատին վրայ յարձակեցաւ, սկսաւ թրջած հողը ճանկռտել։

Եղունգները կոտրեցան դարձան, մատները արիւնեցան։

Ջուրը մէջքին հասած էր։

— Գթութիւն, ազատեցէք զիս, ուզածնիդ կ'ընեմ, ձեր գերին ըլլամ, ձեր շունը ըլլամ, ձեր թշնամիները ակռաներովս պիտի ուտեմ, երբ ինէ զզուիք, ինքզինքս կ'սպաննեմ, եթէ ուզէք Պապը, ձեր թշնամիները թունաւորեմ, սպաննեմ, ջուրը ուսերուս հասաւ, անիծեալ ըլլաս, Սավէլլի, դժոխքին մէջ այրիս, սրիկայ կոմս, օգնութիւն մեռայ, խեղդուեցայ։

Այս կոչերու, հայհոյանքներու պատասխանը պատէն իջնող ջուրին կարկաչը եղաւ։

Ջուրը կոկորդին հասած էր։

Թշուառականին կոկորդէն անասնական ճիչ մը թռաւ։

Ջուրին երեսը մնալու համար արիւնոտ ձեռքերով, սառած թեւերով, անդամալուծուած ոտքերով լողալ սկսաւ- բայց շուտ յոգնեցաւ, կռնակը ջուրին տալով ետեւի վրայ պառկեցաւ։

Սողուններ լաստ մը գտած ըլլալով վրան յարձակեցան։

Առնէտ մը անոր շրթունքները կրծեց, մուկ մը քիթը խածաւ, ականջին վրայէն կարիճ մը կախուեցաւ։

Գաթալանի մարմինը ջուրին մէջ իջաւ, գլուխը պահ մը ջուրին երեսը արմատախիլ ծառի կոճղի մը պէս ծփալէ ետք մէկ կողմ ծռեցաւ, խոշոր քար մը պատէն փրթելով գլխուն վրայ ինկաւ, գանկը ջախ ջախեց։

Հոգեվարքը վերջ գտած էր։

Գաթալան իր չար հոգին սատանային ափը դրաւ։

ՍՈՒՐԲ ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԻ ԲԱՆՏԸ

Միեւնոյն ժամուն անդին Պէաթրիս թեւերը բանտին պատուհաններէն մէկուն երկաթէ ձողերուն կոթնցուցած, տրտում տխուր քանի մը օրէ ի վեր տեղացող անձրեւը կը դիտէր։

Պէաթրիսի խորհուրդները սլաքի պէս ծակել անցնելով բանտին պատերը, Ս. քաղաքին անառիկ պարիսպները, հեռուները կը մխուէին։

Իր սիրելի Օլիմբիօյին, զաւկին վրայ կը մտածէր՝ այն զաւկին որուն դէմքը անգամ տեսած չէր, այն խեղճին որուն ինչ եղած ըլլալը յայտնի չէր։

Արդեօք ո՞ղջ էին թէ մեռած։

Ոչ, Աստուած իր չարչարանքներուն վրայ այդ վիշտը չպիտի աւելցնէր։

(Շար.)

Շարժանկարի ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

Հանրի Տլօքուան, ներկայիս, Տանիէլ Տարիէոյի ընկերակցութեամբ կը գտնուի Սէն Մօրից, ուր Ժան Սկուայէի հետ կ'աշխատի իրականացնել իր յաջորդ երկու ֆիլմերը, մին՝ Լուի Վէրնէոյի վէպէն քաղուած «Օրիորդ Մայրս» և Բիէռ Ռօլֆի գործը եղող «Վստահութեան զեղծում» անուն ֆիլմերը։

Հանրի Տլօքուան Միացեալ Նահանգները մեկնելէ առաջ, 25 Օգոստոսին, «Նորմանտիա» շոգենաւին մէջ բեմադրիչի հանգամանքով «Օրիորդ Մայրս» ներկայացումը տուաւ։ Նոյն ներկայացումը Ապրիլ 10ին տուաւ Էբինէյի մէջ, իսկ Մայիս 15ին, Ժուանվիլի մէջ պիտի ներկայացնէ «Վստահութեան զեղծում» թատերգութիւնը։

Միւս կողմէ, Ապրիլ ամսուան վերջերը պիտի լրանայ «Սուրհանդակ» ֆիլմին պատրաստութիւնները որուն գլխաւոր դերակատարներն են Ժան Կապէն, Կապի Մօրլէյ և Բիէռ Ֆրէզնէյ։

* * *

Ֆէրնան Բիվէր, որ ներկայիս կը դարձնէ Բիէռ Պընուայի հեղինակութիւնը եղող «Պուսիէ», ինչպէս նաև «Դռնապանը փութով կուգայ» «ֆիլմերը, յաջորդաբար պիտի սկսի պատրաստել Լուի Վէրնէօի ծանօթ բիէսը «47 թիւ թիկնաթոռը»։ Ֆէրնան Բիվէրի կողմէ յիշեալ ֆիլմին համար գլխաւոր դերակատարներ նշանակուած են Բէմիւ, Ֆրանսուազ Բօզէյ և Անտռէ Լըֆօր,

* * *

Ապրիլ ամուն վերջերը Բարիեի մէջ պիտի ներկայացուի «Լռութեան պատուար» ֆիլմը, որուն գլխաւոր դերակատարն է Աննապէլլա։

* * *

«Սոսկալի Սարրաթի» անուն ֆիլմին մէկ մասը կը դարձուի Ալժերիոյ մէջ, Անտռէ Հիւկոնի ղեկավարութեամբ։ Սոյն ֆիլմին գլխաւոր դերասանն է Ֆրանսացի տաղանդաւոր դերասան Հարրի Պօր։

* * *

«Անանուն մարդիկը» ֆիլմին առաջին մասին աշխատութիւնները ներկայիս կը կատարուին, ղեկավարութեամբ Ժան Վալլէի։

* * *

Այս տարի, Իսթանպուլի հասարակութիւնը ցարդ բախտը չունեցաւ տեսնելուռ պաստառին վրայ, Հօլիվուտի թագուհին՝ շուէտացի տիեզերահռչակ արուեստագիտուհին Կրէթա Կարպօն, որ կուռքը հանդիսացած է աշխարհի անխտիր բոլոր սինէմայի սիրահարներուն։

Ինչպէս ըսած էինք նախապէս, մօտերս Իսթանպուլի սինէմաները պիտի ներկայացնեն սիրուած դերասանուհիին վերջին ֆիլմը «Քամելիաղարդ Կինը»։

Հօլիվուտի շրջանակներուն մէջ զրոյց կը շրջի թէ Կրէթա այլեւս պիտի հրաժարի սինէմայէն։ Մենք վերապահութիւն միայն կրնանք յայտնել, սակայն եթէ իրականանայ այս զրոյցը, մեծ կորուստ մը պիտի ունենայ թէ՛ Հօլիվուտի Մէթրօ Կօլտուին ընկերութիւնը որուն կարեւորագոյն դերասանուհին է և թէ հանուր աշխարհի սինէմայի հետաքրքիրներոն։

* * *

Տանիէլ Տարրիէօյի բեմական յատկութիւնները մեծապէս գնահատուած ըլլալով Հօլիվուտի դժուարահաճ ռէժիսէօրներուն կողմէ, իրեն պիտի տրուի կարեւոր դեր մը պատմական մեծ ֆիլմի մը մէջ։

* * *

Շաբլ Պուայէի վերջին ֆիլմը «Ալլահներու Պարտէզը» անուն ֆիլմը այս տարի Իսթանպուլի հասարակութիւնը չպիտի կրնայ տեսնել։ Գինի մասին ընկերութեան և սինէմայի տէրերուն միջեւ ծագած տարակարծութեան հետեւանքով։

«Ժամանակ»ի Պատմուածքներէն

ԼՐՏԵՍՈՒՀԻ ՎԱՆՏԱՆ

Թրգմ. ԴԱՐԲՆՈՅԱՊԵՏ — ԼՈՒԻ ԿԱՐՕ

(Շար երէկի թիւէն եւ վերջ)

Եւ իսկապէս, երբ վերադարձաւ, կծկտեցաւ գրկիս մէջ, ամբողջ կարմրած կեղծեալ վրդովմունքէն, և իր խարտեաշ մազերը դրաւ ճիշդ քթիս տակը, որ հրաշալի հոտ մը կը բուրէին։ Աղջիկը անուշահոտութեան մէջ խառնած էրուժգին կնաբեր դեղ մը, որ կրնար հանդարտ կերպով զիս կէս ժամ քնացընել։

Քանի մը երկվայրկեան չունչս բռնեցի, որ ինքը կարծեց թէ՝ անհրաժեշտ է զիս թմրեցնելու։ Ասկէց յետոյ կեղծեցի թէ՝ գէշ կը զգամ ինքզինքս։ Յետոյ աչքերս գոցեցի և սկսայ համաչափ շնչել, կարծես խոր քունի մէջ ինկած եմ։

Այն ատեն ան փողկապս և օձիքս հանեց, շապիկիս կոճակները քակեց և վերցուց փոքրիկ կաշիէ քսակ մը, որ վզիս վրայ կը կրէի։ Բացաւ զայն, փոքր տետրակ մը հանեց դուրս և գաղտնի դուռի մը զարկաւ որ պատին մէջ ծածկոցով ծածկուած էր և որ չէի նշմարած։ Դուռը բացուեցաւ և ակնթարթի մը մէջ դէմքը նշմարեցի «Կապոյտ Դանուբ»ի կառավարիչին, որուն ունեցած դերը վաղուց ինծի ծանօթ էր։ Շարունակեցի կեղծել խոր քուն ունենալս։ Տետրակս անհետացաւ և դուռը գոցուեցաւ։ Վանտս քովս դարձաւ և ուշադրութեամբ զիս դիտէր։ Կը վախնար կանխահաս արթննալէ։

Աղմուկը, որ քովնտի սենեակէն կուգար և որ ինծի լաւ ծանօթ էր, հասկցայ որ տետրակին մէջ գրտնուած վաւերագրերը կը լուսանկարեն։ Տասը վայրկեան յետոյ դուռը բացուեցաւ, Բիէթրօ տետրակը Վանտային յանձնեց զոր ան զետեղեց քսակիս մէջ և վիզէս կախեց,

Աղջիկը թեթեւ չունչ մը առաւ։ Ամէն բան կանխամտածած էր։ Ժամացոյցը վերցուց և սլաքները ետ դարձուց. նոյնը ըրաւ նաեւ պատի ժամացոյցին...։

Այլեւս բնաւ չչուկ չէր լսուեր։ Համարեցի որ ժամանակ է արթընալս։ Վանտա իմ առջեւս կը կենար և կը ժպտէր։

— Ի՞նչ պատահեցաւ քեզ։ Տօթէ՞ն։ Ես օձիքիդ կոճակները քակեցի...։

— Լաւ ըրած էք... Երկա՞ր զգայազիրկ էի։ Ինձ այնպէս թըւեցաւ թէ մարելիք կուգայ վրաս։

— Ամենեւի՛ն ոչ։ Երեք վայրկեան չի կայ որ թիկնաթոռին մէջն էք...։

Այս բոլորը ըսուեցաւ խիստ լըրջօրէն։ Ու ասիկա էր։

— Բայց ընդօրինակուած վաւերագրե՞րը, ձայնեց մէկը։

— Ոչ մէկ վաւերագիր չկար, վրայ բերաւ ժպտելով հարիւրապետ Կ.։ Ես գիտէի թակարդը, որ ինձ կը պատրաստուէր և անհրաժեշտ միջոցներըձեռքառած էի։ Տետրակիս մէջի ծածկագիրը, որ լուսանկարիչէն առած գործածէի, որպէսզի ստայօդ լուրեր զրկեմ մինչեւ խորքը կեղծ էր, պատրաստուած պատահականութեան համար...։

— Իսկ Վանտա՞ն։

— Այո՛։ Սիրահարուած և զղջացող, ան հետեւեալ օրն իսկ արտասուաթոր աչօք ինձ յայտնեց խարդաւանանքը։ Անյականէ անուանէ իր բոլոր մեղսակիցներուն անունները ինծի տուաւ և չէր կրնար հասկնալ թէ՝ ինչո՞ւ առիթէն չէր օգտուեր։ Ընդհակառակը, ես անոր յանձնարարեցի, հաւատարիմ մնալ իր պաշտօնին մէջ։ Բայց անոր չըսի. որ զինքը խաղալիք ըրած եմ։ Աւելի ուշ հասկցաւ։ Բայց ասիկա այլեւս ոևէ նշանակութեան չունէր...։

Հարիւրապետը լռեց։ Դեռատի կին մը սրահէն ներս մտաւ։ Ան մեծ կապոյտ աչքեր ունէր, որուն խոր պայծառութիւնը տպաւորութիւն կ'ընէր, նոյնը ինչպէս Վանտային..,։

ՎԵՐՋ

NERVIN
Չղային ցաւերու, չղային հազերու, անքնութեան, չղային նիհարութեան գլխու ցաւի եւ կիսագլխացաւի, գլխու պտոյտի, նուաղումի եւ չղաձգութենէ առաջ եկած բոլոր անհանգստութիւնները կը դարմանէ։
Օրը 2-3 սուրճի դգալ
ERGO

Աքցանը ակռաներու հոգէառն է
ՍԱՆԻՆ ակռայի բաթը անոնց փրկարարն է



Առաջին or
Երկրորդ or
Երրորդ or

Փորձեցէք եւ պիտի տեսնէք

ՅԱՐԳԵԼԻ ՅԱՃԱԽՈՐԴՆԵՐՈՒՍ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Քարափին վրայ ճամբորդներու նոր սրահի մը կառուցման հետեւանքով, Ղալաթիոյ քարափի նախկին գրասենեակս փոխադրած եմ նոյն կարգը ԲԸԽԹԸՄ ՃԱՏՏԷՍԻ թիւ 17 գրասենեակը, ուր պատրաստ եմ ըստ առաջնոյն անհրաժեշտ բոլոր դիւրութիւնները հայթայթել ինծի դիմող ճամբորդներուն։

Վստահ եմ որ, տարիներէ ի վեր հաստատութեանս ծանօթ յարգելի հասարակութիւնը, պէտք ունեցած պարագային, պիտի հաճի պատուել գրասենեակս, ուր ամէն տեսակ տեղեկութիւն և դիւրութիւն կը տրուի սիրայօժար։

Հեռաձայնի նոր թիւ 43043։

Շոգենաւային գործակալ
ՄԱՐՏԻՐՈՍ ՔԷՕԼԷԵԱՆ

— 300 —

— Ա՞ս ի՞նչ է, այս սնտուկը ի՞նչու հետերնիդ բերեր էք, հարցուց Քօքօ։

— Թերեւս պէտք ունենանք։

— Որո՞ւ, Մանօլիի՞ն։

— Այո, վարժեցուցած եմ, մարդու պէս կրնայ օգնել մեզի։

— Այո, գիտեմ, ըսաւ Պիպի, սնտուկը ուսին վրայ նետեց։

Լուռ ու մունջ, շունչերնին բռնած, առանց ոտքերնուն ծայնը հանելու, մօտեցան Կարմիր-Կով կապելային, որուն պատուհաններէն աղօտ լոյս մը դուրս կը մաղուէր։

Դետնայարկի պատուհաններէն պատռած վարագոյրներ կախուած էին։

Մանօն ոտքին մատներուն վրայ կոխելով պատուհաններէն մէկուն մօտեցաւ, վարագոյրին պատռուածքէն կապելային ներսի կողմը աչքէ անցուց։

Քսան հոգի, արու, էգ, սրահի մը սեղաններուն առջեւ նստած կը խմէին, կը ծխէին, խնդալ խօսելով թուղթ կը խաղային։

Բայց դէմքերնուն վրայ ատելութեան անանկ արյ տայայտութիւն կար, այդ զուարթութեան ետին վրիժառական անանկ բան մը ծածկուած էր որ Մանօն սարսռաց, սկսաւ ինքնիրեն հարցնել թէ այդ աւազակախումբը արդեօք Վիտօքը ծեռք անցուցած ըլլալու՞ն համար կ'ընէր այդ ուրախութիւնը թէ անոր մահուան տօնախմբութիւնը կը կատարէր։

Այդ որջէն ներս մտնել անխոհեմութիւն պիտի ըլլար, աւազակները պիտի ճանչնային Քօքօն, Պիպին, մինչեւ իսկ ենթադրելով որ չկրնային զանոնք ճանչ-

— 297 —

— Այո, տիկին, ինծի կուգայ որ էրիկնիդ էր ան մարդը, շիտակը շատ աղէկ մարդ էր, ոսկի մը դրաւ ծեռքս, Աստուած կեանք տայ ըսի, ան ալ ըսաւ որ կինս ալ քեզ ոսկի մը պիտի տայ, երկու ոսկի, կը լուսցնեմ։

— Առ, ոսկի մըն ալ ինէ։

— Աստուած կեանք տայ։

Այս ըսելով լակոտը պատրաստուեցաւ չուել բայց Մանօն վար դրաւ գայն։

— Կարդալ գիտե՞ս, հարցուց կինը ուշիմ տղուն երեսը նայելով։

— Ոչ, տիկին։

«Այբ»ը սնտուկ է (դագաղ),

«Բէն»ը չաթփաթ (ատրճանակ),

«Գիմ»ը կուկուկ է (հաւ),

«Դա»ն ուրբաթ, շաբաթ։

— Այս թուղթը ուրիշի ցուցուցի՞ր։

— Որ՞ու պիտի ցուցունեմ, չկորսնցնելու համար շապիկիս մէջ խոթած էի։

— Ապրիս տղաս, առ քեզի ոսկի մըն ալ։

— Տփոցէն ազատեցանք, մէկ ոսկին այս գիշեր մօրս կուտամ, մէկն ալ վաղը գիշեր, կ'ազատինք, մէկալով ալ տարի մը կ'ապրիմ, մնաք բարով, շնորհակալ եմ, եթէ ինծի պէտք ունենաք, անունս Ճերմակմուկ է, Գուրթիլ կը նստիմ, ժամուն դէմի տունը։

Այս ըսելով տղան կծիկը դրաւ։

— Կարդացի՞ր, հարցուց դաշնակահար կինը Պիպիի դառնալով։

— Այո տիկին, կարծեմ թէ ժամանակ կորսնցնելու չենք։

— Կը վախնամ որ ուշը մնացած ըլլանք։

ԽՈՆԱՒՈՒԹԵԱՆ
ՊԱՂԱՌՈՒԹԵԱՆ ԵՒ ԿՌԻՓԻ ԴԷՄ

ՊԱՇՏ-ՊԱՆՈՒԵ-ԼՈՒ ՀԱՄԱՐ

ԱԼԿՕ

ԳՈՐԾԱ-ԾԵՑԷՔ ՄԻՄԻԱՅՆ

ԲԱՆ

ALGOPAN

ԿԸ ԳՏՆՈՒԻ ԲՈԼՈՐ ԴԵՂԱՐԱՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Կեդրոնատեղի՝ Պէյօղլու, Կալաթասարայ, Թօքաթլեան պանդոկի դէմ, «ԿԱԼԱԹԱՍԷՐԱՅ ԷՃԶԱՆԷՍԻ» դեղարանը, ԱՀՄԷՏ ՃԷՎԱՏ:

Ամէնէն պարզ, բայց է՛ն կարեւոր միջոց

Հակառակ ցուրտին դէմ բազմաթիւ պիտանի ու անպէտ միջոցներ ... առած ըլլալուն, ասոնց ամէնէն պարզ, բայց ամէնէն կարեւորը ... էր։ Մսեցաւ եւ քովը մէկ քաշէ

GRiPiN

չպահելուն պատիժը կրելով հիւանդացաւ

ԿՌԻԲԻՆԸ բոլոր ցաւերը, խիթերը ... ջապէս կը կտրէ։

ԿՌԻԲԻՆԸ մասնաւորաբար ազդեցիկ է ... բուխի, գլխու և ակռայի ցա... բու, ցրտառութեան և յօդաց... դէմ։

ԿՌԻԲԻՆԸ կարեւորութեամբ կը յանձնար... ուի բոլոր ջերմութիւն պատ... ռող հիւանդութեանց դէմ։

Բերնէն ելած իւրաքանչիւր ակռայ

կը նշանակէ որ կեանքի հիմնաքարերէն մին քակուած է, ...

ՌԱՏԻՕԼԻՆ

ձեզի այս վախ-ճանէն զերծ կը պահէ

Ձեր ակռաները օրը երկու անգամ Ռատիօլին ակռայի խիւսով խողանակելով, ա-նոնց իրական առողջութիւն եւ տեւական կեանք կ'ա-պահովէք։ Ռատիօլինը ո՛չ միայն ձեր ակռաները կը մաքրէ ու կը փայլեցնէ, այլ նաեւ կ'ոչնչացնէ բերնի բոլոր միքրոպները։

ՄԻՇՏ ՌԱՏԻՕԼԻՆ

ՍԿԻԻՏԱՐՑԻՈՑ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Սէլամսըզի «Հայրէթթին թաղ» դեղարանը (նախկին Գրիգորեան) պատիւ ունի իր յարգոյ յաճախորդ-ներուն ծանուցանելու թէ այսու-հետեւ դեղարանի ներքին սպասար-կութիւնը ստանձնած է ծանօթ օգ-նական դեղագործ Պ. Լեւոն Չօպան-եան որ ամենայն ճշդութեամբ եւ խղճմտօրէն պիտի պատրաստէ դե-ղագիրներ և տեղական կամ եւրո-պական պատրաստ դեղերը պիտի վաճառէ Պոլսոյ գնով։

Հեռաձայն 60716 4—7

ՍԻՆԷ ԱԶԱՔ

այս շաբթու կը ներկայացնէ

Կէս կոյսեր Մարի Պէլ, Մատլէն Ռէնօ, Մորիս Էսքօնթ

Տօքթ. Պ. ՔԻՐԷՄԻՏՉԻ

Մասնագէտ

Ներքին հիւանդութեանց

Ամէն օր հիւանդ կ'ընդունի ժամը 15էն 19։

Հասցէ՝ Թարլա Պաչի ճատ-տէսի թիւ 172 աբարթըման Ա. յարկ։

— 298 —

Եւ իր պաղարիւնութիւնը գտնելով, Մանօն հրա-մայեց.

— Անմիջապէս Սէնթ-Ան փողոցը կ'երթաս, Քօքօն կը գտնես, ես ալ պիտի երթամ զգեստներս փոխեմ, այս զգեստով չեմ կրնար Կարմիր Կով կապելայէն ներս մտնել, հոն կապելային բակը իրար կը գտնենք, չու-շանաք:

— Շատ լաւ, կմկմաց Պիպի, չորս ոտքով վազել սկսաւ:

Իսկ դաշնակահարուհին տունէն ներս մտնելով եր-կիւղի մատնուած մոլտաց.

— Երանի թէ ուշ մնացած չըլլայինք:

ԳԱՂՏՆԻ ՈՍՏԻԿԱՆ ՄԱՐԴԱԿԵՐՊԸ

Ատենէ մը ի վեր Խարտիշահեր Մանօն Գուրթիլի մէջ Կարմիր Կով կապելային մօտերը գոց սնտուկի մը վրայ նստած, իր բարեկամներուն կը սպասէր:

Մանօն այս սեւ սնտուկը իր հետ բերած էր:

Լուսին չկար այդ գիշեր, մթութիւնը իր թեւերը տարածած էր, խաւարին մէջ սեւ սնտուկը անտեսա-նելի կը դառնար, կարծես թէ գետնին վրայ ձգուած քար մըն էր:

— 299 —

Անցնող դարձողները Մանօնը տեսնելով մուրաց-կան կարծած էին, որ քնանալու տեղ չունենալով քա-րի մը վրայ կ'անցընէր գիշերը:

Մանօն գաղտնի ոստիկան ըլլալէ ի վեր առաջին անգամ էր որ ասանկ ստիպողական, վտանգաւոր գոր-ծի կը լծուէր:

Իրաւ ալ քանի որ Վիտօք որ մինչեւ այն ատեն մէջտեղ չէր ելած, կը նշանակէ թէ մահացու վտանգ կը սպառնար իրեն դէմ. Մանօն ինքնիրեն կը հար-ցնէր թէ ժամանակին պիտի կրնա՞ր հասնիլ գաղտնի ոստիկանը ազատելու համար:

Թէեւ վստահութիւն ունէր այդ արտակարգ մար-դուն քաջութեան, ճարպիկութեան վրայ բայց Արե-ւորդիներու, իրենց պետին՝ Արիսթօյի անոր հանդէպ ունեցած ատելութիւնը նկատի առնելով միշտ վախը սրտէն պակաս չէր, այս պատճառաւ երբ մութին մէ-ջէն Քօքօն, Պիպին նշմարեց որոնք ծպտուած իրեն կը մօտենային, շունչ առաւ:

— Ո՞ւր մնացիք, խօսք առաւ Մանօն ցած ձայ-նով մը:

— Լաթերնիս փոխելնուս պէս եկանք, պատաս-խանեց Քօքօ, խերը անիծածս, ճամբան հատնելիք ճամբա՞յ է որ, հայր Աբրահամի համրիչին կը նմանի:

— Լաւ, իրաւունք ունիք, ընկերներնուդ լուր տուի՞ք:

— Այո, բայց մեր անձնական կառքին չսպասե-ցինք, նայեցանք որ ուշ պիտի մնանք, հանդիպած կառքովնիս եկանք, պատասխանեց Պիպի, միւսները մեր կառքերով պիտի գան, անոր համար քիչ մը ու-շանան թերեւս, մինչեւ անոնց գալը գործի սկսի՞նք կ'ըսէք:

ՍԱԿ ԱՐԱՆ

12 Ապրիլ 1937 ԲՇ.

ՊԱՐՏԱԹՈՒՂԹԵՐ ԵՒ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ

Պանք Օթօման բաժն. ֆր.	490
Ներքին Փոխառութիւն	96
Սվաղ Էրզրում	95
Անատօլու պարտ. Ա.Բ.	40
Պօն Անատօլու	44
Անատօլու բաժ.	23
Իւնիթիւրք Ա.	20
» » Բ.	20
» » Գ.	—
Իչ Պանքասը	10
Պօմօնթի	10
Պետ. Գրամատուն	93

ԹՂԹԱԴՐԱՄՆԵՐ

Թրքական ոսկի	1046
Սթերլին	621
Լիրէթ	130
Ֆրանք Ֆրանսական	116
Զուիցերիական Ֆրանք	575
Պելճիական Ֆրանք	85
Տրախմի	23
Լէյ	14
Լէվա	23
Տօլար	126
Ռայխսմարք	26

ՉԷՔԵՐ

Լոնտոն	620.—
Բարիզ	17.00
Հռոմ	15.06
Տօլար	0.79.32
Պրիւքսէլ	4.70
Զուիցերիա	3.47
Ֆիօրին	1.44
Պերլին	1.97.06
Աթէնք	88.57
Աւստրիական	4.26
Լէվա	64.34.35
Մոսկուա	24.95